Azg Ազգ

Azg armenian daily

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1994 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 201 (704)

ԱՊՀ գագաթաժողովում հնարավոր է Տեր-Պետրոսյան-Ալիև առանձնազրույց

Այսօր երեկոյան Հայաստանի պետական պատվիրակությունը նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ կմեկնի Մոսկվա, ուր հոկտեմբերի 21-ին կմասնակցի ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդի հերթական նիստին, որի օրակարգում կընդգրկվեն երեք խումբ հարցեր: Անդամ պետությունների ղեկավարները նախ կքննարկեն ԱՊՀ երկրների ինտեգրացիոն զարգացման հիմնական ուղղությունների մասին հուշագիրը, Տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտեի ստեղծման մասին հարցը, ԱՊՀ անդամ երկրների վճարումների միության ստեղծման հարցը: Կրկին կքննարկվի Ղազախստանի նախագահ Նազարբաևի առաջարկը եւրասիական պետությունների միության կազմակերպման մասին: Օրակարգում կդրվի նաեւ Մեծ հայրենականում հաղթանակի 50-ամյակին նվիրված միջպետական միջոցառումների կազմակերպման հարցը: Քննարկվող հարցերի հաջորդ խումբը ընդգրկում է ազգային փոքրամասնությունների իրավունքների առպահովման կոնվենցիան: Գագաթաժողովի ընթացքում կքննարկվեն նաեւ այլ հարցեր: Հավանական է, որ այդ ընթացքում տեղի ունենա Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների առանձնազրույց, թեեւ ՀՀ նախագահի մամուլի քարտուղարի պաշտոնակատար Լեւոն Ջուրաբյանն առայժմ չհաստատեց նման հանդիպման պայմանավորվածությունը:

Ա.Հ.

ԵՐԵՎԱՆ

ՈԱԿ-ՀՈԱԿ համատեղ նիստ

Հոկտեմբերի 15-ին, ՀՈԱԿ կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ ՈԱԿ Կենտրոնական եւ ՀՈԱԿ հանրապետական վարչությունների համատեղ նիստը: ՈԱԿ Կենտրոնական վարչությունից մասնակցում էին Հայկաբեն Ուզունյանը, Հակոբ Գասպարյանը, Պարույր Աղբաբյանը, Վարդան Ուզունյանը եւ Գեւորգ Քեչիբյանը:

Ժողովը բացեց ՀՈԱԿ հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, որն ամփոփ գծերով ներկայացրեց կուսակցության անցած ուղին, բաժանելով երեք փուլերի՝ նախագահի առաջադրման, Ազգային դաշինքի ու սահմանադրության սեփական նախագծի փուլեր: Ռ. Միրզախանյանն ասաց, որ կուսակցությունը երբեք այնքան նոր կառույցներ չի ունեցել, որքան այսօր: Նա ավելացրեց, որ երրորդ արտահերթ դպրազմավորական ժողովից հետո զգալիորեն ավելացել է անդամների թիվը, ստեղծվում են նոր ակումբներ ու շրջանային վարչություններ:

ՈԱԿ Կենտրոնական վարչության փոխատենապետ ընկ. Հայկաբեն Ուզունյանը շեշտեց խորհրդարանական ընտրությունների կարեւորությունը կուսակցության համար, որը ազատական ուսմունքի գաղափարախոսության համար ճնշում է լինելու: Սա այդ, ժողովի մասնակիցները ճնշարկեցին սակա քարոզչական միջոցներն ամրապնդելու ու նորերը ստեղծելու հնարավորությունները, կարեւորվեց մանավանդ ՀՈԱԿ գիտահետազոտական կենտրոնի ստեղծումը, որի նախապատրաստական փուլն ավարտվել է: Որոշվեց կարճ ժամանակամիջոցում «Ազգի» տպաքանակը բարձրացնել, մյուս կողմից էլ նոր թափ տալ «Ազգ» լրատվական կենտրոնի շինարարությանը:

Ժողովի մասնակիցները հատուկ ուշադրությամբ ճնշարկեցին սփյուռքի հարցերի, ՈԱԿ-ՀՈԱԿ եւ ՀՈԱԿ-Հայաստանի փոխհարաբերությունների հետ կապված հարցերը: Քննարկումների ընթացքում եղան տարբեր կարծիքներ, հաճախ իրարամերժ, այդուհանդերձ եզրակացությունն այն է, որ ՀՈԱԿ-ը պետք է շարունակի իր կառուցողական ընդդիմության գիծը, առանց դառնալու իշխանությունների կցորդը կամ պենսիոնատակ եւ կամ ծայրահեղ ընդդիմադիր: ՈԱԿ Կենտրոնական վարչության անդամ Հակոբ Գասպարյանը կարեւորեց ՀՈԱԿ-ի դիրքորոշումների մասին համաղգասխան ասամբլեայի ու մենաբանությունների առասումը սփյուռքի, որտեղ ի մասնավորի Եւրոպայի ու Մեծամոր Արեւելքի շրջանակները բյուր դպրեցագրում ունեն հանրապետության ներքին քաղաքական կյանքի ու ՀՈԱԿ-ի դիրքորոշումների մասին: Մելս Սամվել Սահակյանը բնական համարեց իշխանությունների հետ համագործակցությունը, որը սակայն պետք է լինի դարաշրջանական սկզբունքով: Ռաֆիկ Պետրոսյանը նկատել տվեց, որ ՀՈԱԿ-ը բազմաթիվ առիթներով հանդես է եկել իշխանությունների հետ, միեւնույն ժամանակ մերժելով դառնալ գրպանի կուսակցություն:

Համատեղ նիստի մասնակիցները ճնարկեցին Հայաստանի ներքին թե արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր:

Թուրք լրագրողները մտահոգված են ատոմակայանով

«Ատոմակայանի ո՞ր ռեակտորն է վերագործարկվելու, որքա՞ն է այդ ռեակտորը մոտ Թուրքիայի սահմանին, քանի՞ ատոմակայան ունի Հայաստանը, ինչպե՞ս է աղտոտվելու ատոմակայանի անվտանգությունը, Թուրքիայում կարծիք կա, թե հայկական ատոմակայանը փակվել է վթարի պատճառով, եթե շրջանում խաղաղություն հաստատվի, ապա ինչպիսի՞ հեռանկար է սպասում Հայաստանի էներգետիկայի զարգացմանը», այս եւ նման այլ հարցերին տպիս երեւանում-

Տես էջ 5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Բագրատ Ասատրյան. «Դրամը պետք է մեկուսացնել ռուսական ռուբլու տատանումներից»

Մինչեւ հոկտեմբերի վերջ շրջանառության մեջ կդրվեն 1000 դրամանոցներ

ՏԱՏՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ.

«1995 թվականը կդառնա մեր տնտեսության ռուսական տեղաբաժնի տարի եւ կստեղծվի կայուն ֆինանսական դաշտ», այս հայտարարությամբ երեկ հանդես եկավ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, լրագրողների հետ հերթական հանդիպման ժամանակ: Նման գնահատականի համար հիմք են հանդիսանում ոչ միայն դրամի կայունացման համար տվող վարկերը, այլեւ զարգացման վարկեր ստանալու հնարավորությունը: Պատասխանելով մեր հարցին, Բագրատ Ասատրյանը նշեց, թե ռուսական ռուբլու սղաճի ազդեցությունից դրամը ինչ-որ կերպ պահպանելու համար պետք է հայկական դրամը մեկուսացնել այն տատանումներից, որ կան Ռուսաստանում: Նրա ասելով, թեեւ Ռուսաստանի հետ հարաբերությունները տնտեսական կբնա ունեն, սակայն մեր ֆինանսական համակարգը չի կարող կախված լինել ռուսական ֆինանսական համակարգից, քանի որ կան էական տարբերություններ: Թե կոնկրետ ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում այդ ուղղությամբ, Բագրատ Ասատրյանը խուսափեց դատասխանել, նշելով, թե այդ խնդիրն ունի նաեւ քաղաքական նշանակություն: Ընդհանրապես, Բագրատ Ասատրյանը հայտնեց, թե Ռուսաստանում կատարվող իրադարձությունների գնահատականը տալը բարդ է:

Տես էջ 2

ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐ

Կիեւը ձերբակալեց Ղարաբաղի դեմ կռված հինգ ուկրաինացիների

ԿԻԵՎ, 19 ՀՈԿՏԵՄԵՐ, ՓԱՍՏ: Ուկրաինայի իրավապահ մարմինները ձերբակալել են դարաբաղա-ադրբեջանական հակամարտությանն Ադրբեջանի կողմում մասնակցած հինգ վարձկանների: Այս մասին հաղորդել է Ուկրաինայի անվտանգության ծառայությունը: Կիեւի, Դոնեցկի եւ Չերկասիի բնակիչներ վարձկանները վերադարձել են Ադրբեջանից: Նրանցից երկուսը՝ մարմնական վնասվածքներով: Չերբակալվածները խոստովանել են իրենց մասնակցությունը գինյալ բախումներին որպես վարձկաններ եւ նշել այն ընկերությունների անունները, որոնք իրենց հավաքագրել են արտասահմանում գինյալ գործողությունների մասնակցելու համար: Ուկրաինայի խորհրդարանն 98 թ. նոյեմբերին հավելում է կատարել քրեական օրենսգրքում՝ ներառյալ հոդվածներ վարձկանների մասին, որոնք մասնակցում են գինյալ բախումների արտասահմանում:

Տես էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆ

Չի հաջողվում գտնել Հուսեյնովին

ԲԱԿՈՒ, 19 ՀՈԿՏԵՄԵՐ, ՓԱՍՏ: Ադրբեջանի ոստիկանությանն ու անվտանգության ուժերին տակավին չի հաջողվում գտնել երկրի նախկին վարչապետ Սուրեթ Հուսեյնովին: Նա, ինչպես հայտնի է, անհետացել է անցյալ շաբաթվա վերջին, երբ խորհրդարանը հոկտեմբերի 6-ին արտոնեց նրա ձերբակալումը: Ադրբեջանի իրազեկ աղբյուրներն այն համոզմունքն են հայտնել, թե Հուսեյնովը թաքնվել է լեռներում կամ էլ լքել երկիրը: Ավելի հավանական է համարվում երկրորդ տարբերակը: Հուսեյնովի Գյանջայի տունը գտնվում է հսկողության տակ, սակայն նախկին վարչապետն այնտեղ չի հայտնվել:

«Գոլանը վեճի առարկա չի դառնա»

ԿԱՅՐԻ, 19 ՀՈԿՏԵՄԵՐ, ԻՏԱՐ ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գոլանի բարձունքները մնում են Սիրիայի հողը եւ երբեք Իսրայելի հետ սակարկության առարկա չեն դառնա, այսպես երեկ մամլո ասուլիսում հայտարարեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ իր բանակցություններից հետո: «Մենք մինչեւ օրս իրական պետության հետ Գոլանի առթիվ որոշակի համաձայնության չենք եկել», ընդգծեց Սիրիայի ղեկավարը:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ռուսաստան-ԵԱՀԽ. Մրցակցությունը գնալով ավելի է սրվում

Հոկտեմբերի 17-ին Վիեննայում սկսվեց ԵԱՀԽ-ի դռնփակ նիստը: Օրակարգի գլխավոր հարցը ԵԱՀԽ-ի բազմազգ խաղաղապահ ուժերի ստեղծման հնարավորությունն է: Վիեննայի դռնփակ հանդիպումներ հրավիրված են ԵԱՀԽ բոլոր 52 անդամները: Հանդիպումը տարածվեց մի նոտակ, որ ԵԱՀԽ-ի իսալյացի նախագահ խնդրում է անդամ երկրներին դատասխանել այն հարցին, թե կարո՞ղ են արդյոք զորամիավորումներ տրամադրել Լեռնային Ղարաբաղում տեղակայելու համար: Ակնկալվում է, որ զորամիավորումների զինվորների թիվը դեռեւ է հասնի 2000-ի: Ըստ ԵԱՀԽ-ի, որեւէ երկրի զինվորների թիվը չի կարող գերազանցել-ընդհանուր թվի 30 տոկոսը, այսինքն ոչ մի երկիր չի կարող 600-ից ավելի զինվոր տրամադրել: ԵԱՀԽ-ի անդամներ դեռեւ է դատասխանեն նաեւ այն հարցին, թե կարո՞ղ են արդյոք ֆինանսական աջակցել խաղաղապահ գործողություններին կամ աղահովել անհրաժեշտ սարքավորումներ եւ տեխնիկա: ԵԱՀԽ-ի դատասխանատուները հայտնեցին, որ այս հանդիպումը նախնական է միայն, քանի որ առայժմ հստակ նշաններ չկան, որ Ղարաբաղի կարգավորումը անխուսափելի առաջադ է: Այդ դատճառով էլ զորքեր տրամադրելու մասին արված որեւէ առաջարկ չի հրաժարակվելու: ԵԱՀԽ-ի դիտանցգեների կարծիքով, խաղաղապահ ուժեր ստեղծելու այս նոր նախաձեռնությունը դարաբաղյան հարցում ԵԱՀԽ-ի գերակայությունը վերահաստատելու փորձ է, որի դեմ դուրս է գալիս Ռուսաստանը: Ադրբեջանի քաղաքական մեկնաբանների կարծիքով, այս հանդիպման նոտակն է մարտահրավեր նետել Ռուսաստանին, որը հայտարարել է, թե խաղաղապահ ուժերը պետք է կազմված լինեն միայն ռուսական եւ ԱՊՀ երկրների զորամիավորումներից եւ գտնվեն Մոսկվայի հրամանատարության տակ: Ռուսաստանը դատահանում է, որ ԵԱՀԽ-ն մի կողմ քաշվի եւ հնարավորություն տա իրեն վերահսկելու դարաբաղյան կարգավորման բանակցությունները:

Տես էջ 2

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԽ-ն նպաստո՞ւմ, թե խոչընդոտում է խաղաղ կարգավորմանը

Թեեւ արդեն ավելի քան հինգ ամիս է, ինչ դարաբաղյան ճակատներում հրադադարն բնդհանուր առմամբ դահպանվում է, սակայն իրադրությունը շարունակում է մնալ անկայուն եւ անկանխատեսելի: Ռազմական հակամարտության գոտում ստեղծվել է սպառողական մի իրավիճակ, երբ ադրբեջանական կողմը ոչ հրաժարվում է ուժային մեթոդներով հիմնախնդրի լուծումից, ոչ հանդգնում է դիմել ռազմական լայնածավալ գործողությունների: Ստեփանակերտի մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը հաղորդում է, թե հակառակը՝ ամեն դեպքում դարձի հաճախակի դարձող խախտումների վտանգավոր հաղթահարման, ադրբեջանական զորամիավորումներ շարունակում են գնդի տարբեր տեսակներից գնդակոծել դարաբաղյան ուժերի դատասխանական դիրքերը, ռազմական տարբեր հատվածներում առավելապես Մարտակերտի, Աղդամի եւ Թիզաթի ուղղություններով: Գրգռիչ գործողություններ են արձանագրվում նաեւ Մարտակերտի եւ Շահումյանի շրջանների սահմանագծում: Միակողմանիորեն դահպանելով հրադադարը, դարաբաղյան բանակն առաջվա պես դատասխան քայլերի չի դիմում: ԼՂՀ հաղթահարման փորձագետների հատոգմամբ, դարաբաղյան դիրքերի գնդակոծումներ, որոնք նդատակ են հետապնդում ձախողել խաղաղ բանակցությունները, հիմնականում իրականացնում են Ադրբեջանի ընդդիմադիր ուժերին, մասնավորապես նախկին վարչապետ Սուրաթ Հուսեյնովին ենթակայվող զորախմբերը, որոնք փորձում են ամեն կերպ դարաբաղյան ճակատներում բախումներ հրահրել եւ առպակայունացնել իրադրությունն Ադրբեջանում դրանով իսկ լուծելով մի շարք ներքաղաքական խնդիրներ:

Բոլոր դեպքերում ԼՂՀ դատասխանատու բանակի գլխավոր հրամանատար, գնդապետ Մանվել Բարսեղյանը հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը դատրաստ են ցանկացած դահի արժանի հարված հասցնել թշնամուն, եթե վերջինս փորձի խախտել հանդարտեցման սահմանները եւ հաստատված զինադադարը: Միաժամանակ գեներալը նշել է, թե միայն կարգալի ճակի դինաց դարաբաղյան բանակի ստորաբաժանումները դուրս կբերվեն այն տարածքներից, որոնք Ղարաբաղի համար ռազմավարական եւ կենսական մեծ կարեւորություն չունեն, եւ որոնց հանձնումը չի սպառնա Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությանը:

Տես էջ 2

«Կարեւոր ճանապարհ թյուրք ժողովուրդների համար»

Ստամբուլի գագաթաժողովն ավարտվեց

Երեկ ավարտվեց թյուրքական դետությունների երկրորդ Ստամբուլի գագաթաժողովը: Մեզ համար կարեւոր է, թե Ադրբեջանի դեկավարությունն ինչդիսի քայլեր կձեռնարկի Ղարաբաղի հակամարտության կարգավորման նդատակով: Չէ՞ որ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի համար վերջին շաբաթը ծայրաստիճան հագեցած էր դիվանագիտական հանդիպումներով, եւ արդեն հոկտեմբերի 21-ին Ալիեւը դետք է Մոսկվայում ներկա գտնվի ԱՊՀ դետությունների դեկավարների հանդիպմանը: Զգուշավոր Հեյդար Ալիեւը անմիջապես նշեց, որ «այդ երկու գագաթաժողովներ հակադրելու բոլոր դատճառները անթույլատրելի են»:

Տես էջ 5

digitised by A.R.A.R.@

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ռուսաստան-ԵԱՀԽ. Մրցակցությունը գնալով ավելի է սրվում

Սկիզբը էջ 1

«Ազատություն» ռադիոկայանը, լուսաբանելով այս խնդիրը, հաղորդել է, որ իր թղթակցի հետ ունեցած մի մասնավոր զրույցում ԵԱՀԽ-ի մի ավագ դաշտոնյա, որը չցանկացավ հրադարակել իր անունը, ասաց. «Մենք հայտվել ենք մի այնպիսի տարօրինակ կացության մեջ, երբ Ռուսաստանը մասնակցում է Մինսկի խմբի բանակցություններին, ստորագրում է ԵԱՀԽ-ի առաջարկները, իսկ հետո անց է կացնում իր սեփական բանակցությունները, ներկայացնում իր սեփական առաջարկները, որոնք հաճախ զգալիորեն տարբերվում են»: Դիվանագետի կարծիքով, Ռուսաստանը, ելնելով իր սեփական քաղաքական ու ռազմական շահերից, ձգտում է վերահսկել դարաբաղյան բանակցությունները: Դիվանագետը ասաց, թե Հայաստանը եւ Ադրբեջանը հայտնել են ԵԱՀԽ-ին, որ գերադասում են միջազգային խաղաղապահ այնպիսի ուժեր, որտեղ Ռուսաստանը կլինի մասնակից երկրներից մեկը միայն: Հայաստանի եւ Ադրբեջանի կարծիքով, խաղաղապահ ուժերը պետք է գտնվեն ԵԱՀԽ-ի կամ ՍԱԿ-ի վերահսկողության տակ եւ ենթարկվեն ԵԱՀԽ-ին կամ ՍԱԿ-ին հաշվետու հրամանատարությանը: Ռուսաստանին դուր չի եկել, որ էլիասոնը շատ աշխուժորեն էր գործում, ի տարբերություն իր նախորդների, որոնք Մինսկի խումբը ղեկավարում էին իրենց գրասենյակներից, հաճախ էր այցելում հակամարտության շրջան, որ երբեմն միեւնույն ժամանակ գտնվում էր նաեւ Կազիմիրովը: Էլիասոնը իր փոխարեն Մինսկի խմբի նախագահ է առաջադրել մի այլ վեդ դիվանագետի՝ Անդրես Բրյուներին, որին դեմ է Ռուսաստանը: Այսպիսով, Ռուսաստանի եւ ԵԱՀԽ-ի մրցակցությունը դարաբաղյան կարգավորման գործում գնալով ավելի է սրվում, որը մտահոգում է հակամարտության կողմերին: Ըստ «Ազատության» թղթակցի, անցյալ շաբաթ Հայաստանի ներկայացուցիչը հայտնել է ԵԱՀԽ-ի դիվանագետներին, որ պետք է եռանդուն ջանքեր գործադրել մինչեւ առաջիկա ծմեռ հակամարտությունը կարգավորելու համար: Ըստ «Ազատության» թղթակցի, երկու կողմերը կցանկանային, որ հակամարտությունը կարգավորվի մինչեւ ԵԱՀԽ-ի առաջիկա գագաթաժողովը, որը կկայանա դեկտեմբերին Բուդապեշտում: ԼՏ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԽ-ն նպաստու՞մ, թե խոչընդոտում է խաղաղ կարգավորմանը

Սկիզբը էջ 1

Մինչդեռ կարգավիճակի մասին առայժմ խոսք չկա: Փոխարենը ԵԱՀԽ-ն ամեն կերպ փորձում է ակտիվացնել իր միջնորդական ջանքերը, եւ հոկտեմբերի 17-ին Վիեննայում սկսված ԵԱՀԽ խորհրդաժողովում ամենայն հավանականությամբ կքննարկվի ԵԱՀԽ անվտանգության ուժեր ստեղծելու խնդիրը: Նման առաջարկով հանդես է եկել ԵԱՀԽ Իտալիայի դաշտվիրակությունը, իսկ ԵԱՀԽ գործող նախագահ, Իտալիայի արտգործնախարար Մարտինոն առաջարկել է այդ ուժերի բիվը տասնապատիկ 2 հազար միաժամանակ առաջարկելով, որ ոչ մի երկրի զորքերի բիվը չգերազանցի անվտանգության ուժերի ընդհանուր թվի 30 տոկոսը: Ինչպես հայտնի է, սա ճիշտ եւ ճիշտ Ադրբեջանի իշխանությունների դիրքորոշումն է անվտանգության ուժերի խնդրում: Պետք է ենթադրել, որ ԵԱՀԽ Մինսկի խմբի փոխնախագահ Պեր Անդերսենի Երեւան եւ Բաքու կատարած այցելությունների ընթացքում քննարկվել է նաեւ ԵԱՀԽ անվտանգության ուժերի կազմի հարցը:

Գաղտնիք չէ, որ վերջին շրջանում դարաբաղյան խնդրում Ռուսաստանի եւ ԵԱՀԽ-ի միջեւ լուրջ տարաձայնություններ կան: Գաղտնիք չէ նաեւ, որ այդ հակասությունների արմատը վերջին հաշվով Անդրկովկասում ռուսական գերիշխանության վերականգնման հետ է կապված: Սակայն ինչ վերաբերում է դարաբաղյան հակամարտության կարգավորմանը, առա խնդիրն այն է, որ ԵԱՀԽ-ն կարող է տարիներով քննարկել անվտանգության միջազգային ուժեր ստեղծել-չստեղծելու խնդիրը, եւ դեռ պարզ չէ, թե ինչ արդյունք կունենան այդ քննարկումները: Մինչդեռ Ռուսաստանը ցանկացած պահի պատրաստ է ԵԱՀԽ-ի կամ ՄԱԿ-ի մանդատն ստանալուն դեռ տարանջատիչ ուժեր ուղարկել հակամարտության գոտի, եւ խնդիրն այստեղ ամենևին էլ քաղաքական հիմնակարգի կիսարելագործումն է:

Դարաբաղյան հակամարտության կարգավորմանը առաջարկվող ուղիներ: Թուրքիայի իշխանություններ վերջերս հայտարարել են, որ եթե Ռուսաստանը փորձի միակողմանիորեն լուծել դարաբաղյան խնդիրը, դա կարող է «անցանկալի հետեւանքներ» ունենալ: Թուրքական աղբյուրների համաձայն, մի շարք թուրք գեներալներ այն կարծիքին են, թե այդ շրջանում ոչեմ է կիրառվեն այնպիսի միջոցներ, ինչպիսիք կիրառվում են միջազգային հանրության կողմից Բալկաններում:

Եթե ԵԱՀԽ-ն ջանում է ամեն կերպ խոչընդոտել Ռուսաստանի վերադարձն Անդրկովկաս, առա զարմանալի է, թե ինչու՞ նույն կերպ չի վարվում Թուրքիայի նկատմամբ: Անկասկած է, որ ԵԱՀԽ անդամ երկրներն առանձնապես մեծ խանդավառություն հանդես չեն բերի ստեղծվելիք խաղաղարար ուժերի կազմում իրենց բաժինն ունենալու համար, եւ Թուրքիայի համար այնքան էլ դժվար չի լինի այնտեղ ունենալ զորքերի ընդհանուր թվի 30 տոկոսը: Եւ ավելի ճիշտ չի՞ լինի արդյոք, եթե ԵԱՀԽ-ն, փոխարեն խրելով ռուսական սայլի անիվների մեջ, ինքը նույնպես մի կողմ հաշվի բռնելով, որ Հայաստանը, Ղարաբաղն ու Ադրբեջանն իրենք իրար հետ «լեզու գտնեն»: Մանավանդ որ անցած տարիների փորձը ցույց է տալիս, թե անմիջական շփումներն անհամեմատ ավելի արդյունավետ կարող են լինել: Թե չէ ստացվում է այնպես, որ ԵԱՀԽ-ն այսօր ինքն է խոչընդոտում հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ առաջ քաշելով այնպիսի պահանջներ, որոնք ի սկզբանե ոչ միայն անընդունելի են, այլեւ անիրագործելի: Համենայնդեպս պարզ է մի բան ԵԱՀԽ-ի համար առաջնայինը ոչ թե հակամարտության բուն կարգավորումն է, այլ դրա շահարկման միջոցով Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելը: Իսկ ներկա իրավիճակում դա նշանակում է վանգել խաղաղ կարգավորման հեռանկարն ու առանց այն էլ փխրուն հրադադարը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

«Դրամը պետք է մեկուսացնել ռուբլու տատանումներից»

Սկիզբը էջ 1

Դրա կարծիքով, եթե մամուլի միջոցներ մեծ աշխատանք ծավալեն, որպեսզի բնակչությունը չօգտագործի այլ տարադրամային միջոցներ, առա բնակչության կյանքը կլավանա 20-25 տոկոսով: Կենտրոնական բանկի նախագահն այդ առթիվ հայտնեց, թե դրամի խանգի որեւէ անբավարարություն չկա, եւ դեռ հոկտեմբերի վերջից շրջանառության մեջ կդրվեն 1000 դրամանոցներ, որոնց առաջին նմուշներն արդեն դաստրատված են: Նշելով, որ 1000 անոցներ կարտահանվեն համապատասխան քանակով, նա նշեց, որ դրա հետ կապված Լմխիայի խնդիր չի ծագի:

Անդրադառնալով դրամի վիճակին, կենտրոնական բանկի նախագահը նշեց, թե հոկտեմբեր ամսին սղաճի տեմպերը ցածր էին, այն կազմել է 6,4 տոկոս, իսկ բորսայի եւ տակսայական փոխարժեքների մոտեցման մյուսները անհայտ են: Եթե հունիսին տարբերությունը կազմում էր 30 տոկոս, առա սեպտեմբերին այն հասել է 17,6 տոկոսի, իսկ հոկտեմբերի 18-ի դրությամբ 7,8 տոկոսի:

Անցած մեկ ամսվա ընթացքում բարելավվել են կանխիկ դրամի շրջանառության հետ կապված խնդիրները, կրճատվել է Լմխիան: Բաղրաս Ասատրյանը նշեց, թե փոխարժեքների բարձրացման վրա նպաստ կարող է հացի գների ազատականացումը, դեկտեմբերի 1-ից սպասվում է հացի գնի տասնապատիկ բարձրացում:

■ *«Մինչեւ տարեվերջ Հայաստանում սպառը կկազմի ամսական 5-7 տոկոս»*: Հայաստանի կենտրոնական բանկը կջանա մինչեւ տարեվերջ սպառի տեմպերը պահպանել ամսական 5-7 տոկոս մակարդակի վրա: Այդ մասին հարցազրույցում հայտարարեց ՀՀ կենտրոնական բանկի միջազգային եւ տարադրամային գործառնությունների վարչության ղեկ. Հարություն Մեսրոպյանը: Նրա խոսքերով, սեպտեմբերի 21-ից մինչեւ հոկտեմբերի 12-ը ֆինանսատնտեսական խոցերի հետեւանքով Ռուսաստանում ռուբլու արժեզրկումը կազմել է 68 տոկոս, մինչդեռ Հայաստանում, ասաց Մեսրոպյանը, նույն ժամանակամիջոցում կազմել է 3,5 տոկոս, որը վկայում է, որ դրամը խոսք կազմավորված դրամական միավոր է: Մեսրոպյանի կարծիքով, կենտրոնական բանկի կարեւորագույն խնդիրներից մեկը հանրապետության բանկային հիմնակարգի կիսարելագործումն է:

ԲԻԶՆԵՍ, ՍՆԱՐՔ

ԵՐԵՎԱՆ

Դիվանագիտական շաբաթ

Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան է նշանակվել Ֆելիքս Մամիկոնյանը: Հայտնի է, որ վերջին չորս տարիների ընթացքում դեսպան Ֆելիքս Մամիկոնյանը Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցիչն էր Ռուսաստանի Դաշնությունում:

Հոկտեմբերի 16-ին Կահիրեի ՀՀ դեսպանությունում եգիպտոսի ՀՀ դեսպան Եդուարդ Նալբանդյանն ու եգիպտոսում Էթիոպիայի դեսպան Սուհամմադ Ալի Ամրը ստորագրեցին համաձեռ հայ-էթիոպական կոմյունիկե, որով դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին երկու երկրների միջեւ: Հի շեշտենք, որ Էթիոպիան իր անկախությունը ստացավ 1993 թ-ին, ՍԱԿ-ի կողմից անցկացված հանրաքվեից հետո, երբ անջատվեց Եթովպիայից:

Հոկտեմբերի 19-ին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն ընդունեց Հայաստանում Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Վահրամ Ներսիսյանցին եւ Համաշխարհային բանկի սոցիալական ներդրումների ծրագրի վարիչ Ալեքսանդր Մարկին: Հայտնի է, որ այդ ծրագիրը կաղահովի լրացուցիչ աշխատատեղերով, կստեղծի առաքնահերթ կարեւորության սոցիալական ենթակառուցվածքներ, կխթանի ձեռներեցությանը:

ՀԱՄԱՌՈՏ

Ուսուցիչների աշխատավարձը կբարձրանա բյուջեին զուգընթաց

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Ուսուցիչների սոցիալական վիճակի բարելավումը՝ աշխատավարձի բարձրացման մասով, վերաբերում է հանրապետության բյուջեին: Եթե կավելանա, բյուջեի եկամուտները ֆինանսական օգնությունների հաշվին, կավելանան նաեւ ուսուցիչների աշխատավարձը: Այս մասին տեղեկացրել են ՀՀ կառավարությունում: Սակայն այդ դեպքում կբարձրանան ոչ միայն ուսուցիչների, այլեւ բոլոր բյուջետային հիմնարկների աշխատավարձերը:

Մանդի ծանրոցներ բազմազավակներին

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: «Ազնավուրը՝ Հայաստանին» բարեգործական կազմակերպությունը այսօր ավարտեց 15 կգ-ոց սննդամթերքի արկղերի բաշխումը մայրաքաղաքի 4 եւ 5 անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին: Ծանրոցների բաշխումը տեւելու է երկու շաբաթ, այն իրականացնում են մայրաքաղաքի շրջանների սոցիալական ծառայությունները:

Ծխախոտը հանվեց ազատ վաճառքի

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Երեւանգործկոմի առեւտրի վարչությունը դադարեցրել է ծխախոտի կտրոնային վաճառքը: Այսուհետ պարենային խանութներում ազատ վաճառքի կհանվեն «Արինբերդ» եւ «Կոսմոս» սիգարետները՝ 28 դրամ արժեքով: Վարչությունից տեղեկացրին, որ ներկայումս խանութներին է տրվում անհրաժեշտ քանակի 70 տոկոսը: Սիգարետների վաճառքը կայունացնելու միակ երաշխիքը, նրանց կարծիքով, ֆաբրիկային պարտքը ժամանակին վճարելն է:

Նշանակվեց «Զմեռ-95»-ի նոր համակարգող

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Երեւանի քաղգործկոմի կաթիսալ շինարարության վարչության պետ Ռոբերտ Նազարյանը քաղգործկոմի որոշմամբ նշանակվել է «Զմեռ-95» ծրագրի համակարգող, միաժամանակ նաեւ քաղգործկոմի օպերատիվ կառավարման շտաբի պետ: Ավելացնենք, որ պրն. Նազարյանը մեկ ամսից ավելի է փոխարինում էր «Զմեռ-95» օպերատիվ շտաբի համակարգող Ռաֆիկ Թորոսյանին՝ իբրեւ թե նրա արձակուրդում գտնվելու պատճառով:

ԶՄԵՌ-95

Ամենաքիչը կջեռուցվի Երեւանը

Էներգետիկան վճարվում է ընդամենը 40 տոկոսով

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Հանրապետության ջեռուցում ակնկալող քաղաքացիներից այս ծմեռ ամենաքիչը կջեռուցվի Երեւանը, նախկին 25-ի փոխարեն՝ 36 տոկոսի չափով: Այս մասին հայտնել են ՀՀ կառավարությունում: Ջեռուցման այս մակարդակի ընտրությունը բացատրվել է մայրաքաղաքում ջեռուցման տեխնիկական նվազ հնարավորություններով: Ըստ այդմ որոշվել է ջեռուցումը կազմակերպել այն բաղամասերում, որտեղ կա կենտրոնացված համակարգ, հզոր կաթսայատուն, հնարավորություններ, որոնք բացակայում են քաղաքի կենտրոնական մասում: Ընդհանուր առմամբ, նախկին 22-ի փոխարեն այս ձմռանը նախատեսված ջեռուցվող քաղաքների եւ բնակավայրերի բիվը որոշված է հասցնել 30-ի:

Մյուս կողմից, հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիան վճարվում է ընդամենը 40 տոկոսով: ՀՀ կառավարությունից ստացված տեղեկատվության համաձայն, օգտագործվող էլեկտրաէներգիայի համար գրեթե ամբողջությամբ չի վճարում բնակչությունը, որին բաժին է ընկնում արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 45 տոկոսը: Վճարումների վիճակը վատ է նաեւ բոլոր պետական ձեռնարկությունների եւ հատկապես այնպիսի բյուջետային հիմնարկների կողմից, ինչպիսիք են հիվանդանոցները, գիտության ու կրթության համակարգերը, գործկոմները:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Աբխազիայի հայկական դպրոցները կգործեն Հայաստանի օգնությամբ

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍՏ: Աբխազիայի երկարատեւ դպրոցական գործողություններն իրենց դրոշմն են թողել նաեւ 47 հայկական դպրոցների վրա: Այրվել ու ոչնչացվել են դպրոցական շինարարությունները, վերջիններս զրկված են դասագրքերից, գրենական պիտույքներից եւ գույքից: Չնայած այդ ամենին, ստեղծվել են որոշակի շեմային պայմաններ եւ հոկտեմբերի 1-ից հայկական դպրոցներն սկսել են գործել: Անհրաժեշտ գրքեր եւ այլ դասագրքեր ձեռք բերելու նպատակով անցած շաբաթ Հայաստան էր այցելել Աբխազիայի լիազորության փոխնախարար Գաբրիել Տոնդոյանը, որը նաեւ Աբխազիայի ազգային հերոս է: Ուսուցիչների վերապատրաստման եւ կատարելագործման հանրապետական ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Գաբրիելյանի հետ դպրոցներին դասագրքերով, մեթոդական ձեռնարկներով եւ ծրագրերով օժանդակելու պայմանավորվածություն է ձեռք բերվել: Պայմանավորվածության համաձայն, ինստիտուտում կստեղծվի դասագրքերի ֆոնդ, որտեղ կհավաքվեն նախորդ տարիների դպրոցական դասագրքերն ու գեղարվեստական գրքերը եւ կուղարկվեն Աբխազիա: Պրն. Գաբրիելյանը հայտնեց, որ քաղգործկոմի մշակույթի վարչությունն արդեն ֆոնդին է հատկացրել 3 հազար անուն գեղարվեստական գիրք, իսկ մնացածը կհավաքագրվի բնակչությունից եւ այլ ճանապարհներով:

Ինստիտուտը հանձն է առել նաեւ հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման հարցը: Ինստիտուտի հայ ժողովրդի պատմության եւ հայոց լեզվի մասնագետներն այդ նպատակով օրերս կմեկնեն Աբխազիա: Համայնքում դասավանդման նպատակով Աբխազիա մեկնող ուսուցիչներին խոստացում են 20 անգամ բարձր աշխատավարձ, նրանց կապահովեն բնակարանով, կլուծեն նաեւ ֆինանսական մյուս հարցերը: Կատարելագործման ինստիտուտը խոստանում է արդեն հիմայից հոգալ ուսուցիչների երթեւեկության հեշտագնացությունը Հայաստանի մանկավարժական բուհերում, ինչպես որ արդեն: Գաբրիել Տոնդոյանի կարծիքով, դա հիմայից մեծաքանակ դպրոցներ մանկավարժական կադրերով ապահովելու լավագույն տարբերակն է:

ՈՒՍԿԻՆՈՒՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հանրապետության Դ տարի
Գլխավոր եւ հիմնադիր
«Ազգ» թերթի հրատարակչատուն
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (7 8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ԱԲԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍՍՐԳԵՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊԱՏԵԼ ԴԱԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շտաբագիր «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

1985 ի աստիճանական հաղթական բարեշրջումներ հանգեցրին արաստահման մշտական բնակության մեկնողների կարգավիճակի զգալի բարելավման: Միևնույն ժամանակ, բառացիորեն 1-2 տարվա ընթացքում մեկնել ցանկացողների թիվը զգալիորեն կրճատվեց: Ավելին, լուրջ հաղթական եւ տնտեսական փոփոխությունների ակնկալիքով սկսեցին վերադառնալ մշտավորականության որոշ ներկայացուցիչներ:

Սակայն, 1988 թվականից սկսած սուր հաղթական, այնուհետեւ ազգամիջյան բախումները, «անկախության հերթը» եւ ԽՍՀՄ փլուզումը սկզբնավորեցին մարդկային զգալի զանգվածների տեղաշարժեր, իսկ վերջին երեք տարում որոշ հարաբերական տնտեսական եւ սոցիալական վերաբերում է հետագա արաստահման մեկնողներին, առայժմ չկրկնելու համար վերը բերված դասողությունները այլ թվերի վերաբերյալ եւ նկատի ունենալով, որ այդ հարցերը արծարծվել են մամուլում, մենք այն բաց թողնում, շեշտելով նյութի, եւ հատկապես Հայաստանի վերաբերող նյութի մասնագիտական խոր վերլուծության անհրաժեշտությունը:

Այսպես կոչված «մերձավոր արաստահման» մեկնողների խնդիրը սկսում է ավելի մեծ ուշադրություն բեռնել ոչ միայն իր ծավալների, այլեւ հնարավոր սոցիալ-ժողովրդագրական հետեւանքների առումով: Այսպես, 1993՝ թ. ընթացքում եւ 1994 թվականի առաջին կիսամյակում, ազգաբնակչության ներհոսը Ռուսաստան հիմնականում տեղի է ունեցել Միջին Ասիայի եւ Անդրկովկասի հաշվին: Վերջին երկու տարում այդ տարածաշրջաններից տեղափոխվածների հանակը գերակշռել է հակառակ ուղղությամբ մեկնողների հանակին 1 մլն. մարդով: Ազգաբնակչության ներհոսի ածր Ռուսաստանում հիմնականում տեղի է ունեցել Ղազախստանի 133 հազար (ընդհանուր հանակի 24 տոկոսը), Կիրգիզիայի 86 հազար (ընդհանուրի 16 տոկոսը): Ընդհանուր առմամբ միջինասիական հանրապետություններից վերջին 4-5 տարիների ընթացքում Ռուսաստան է տեղափոխվել մոտ 600 հազ. մարդ: Ռուսաստանում ազգաբնակչության հոսքի բացասական սպասը զգացվում է միայն Ուկրաինայի եւ Բելառուսի հետ, չնայած վերջին տարում ՌԴ-ից այս հանրապետություններ մեկնողների հանակը կրճատվել է 1.8 անգամ:

Վերը բերված 1 միլիոն տեղափոխվածներից 745 հազարը կազմում են ռուսներ, մոտ 519 հազար միջինասիական հանրապետություններից, 134 հազար Անդրկովկասից եւ 92 հազար Մերձբալթիկայից: Սրանից բացի, մոտ 450 հազար մարդ (առ 1 հունվարի 1994 թ. տվյալներով) Ռուսաստան է տեղափոխվել որպես փախստական կամ հարկադիր տարագիր: 1994 թ. անցած ամիսների ընթացքում գրանցվել է եւս 120 հազար մարդ: Մասնագետների կարծիքով, նախկին խորհրդային տարածաշրջանում ազգաբնակչության տեղաշարժերի իրական թվերը գերազանցում են պաշտոնական թվերը առնվազն 30 տոկոսով:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգաբնակչության տեղաշարժեր

Արտաստահման մեկնում են հիմնականում մասնագետները

կան վաստարացման հետեւանք, հանգեցրին նաեւ զգալի արտահոսքի:

Ռուսաստանի կառավարությանն առընթեր տնտեսական հետազոտությունների կենտրոնի կանխատեսումներով, 2001-2005 թվականներին արտաստահման մեկնողների թիվը կկազմի 300 հազար մարդուց մի փոքր ավելի: Դա ընդհանուր առմամբ մեծ թիվ չէ, սակայն լուրջ անհանգստություն են առաջացնում մեկնողների սոցիալական կազմի ներկա միտումները, որոնք ժամանակի ընթացքում կարող են վերածվել սուր հիմնահարցի:

Այսպես, Ռուսաստանի վիճակագրության տվյալներով, 1994 թ. առաջին կիսամյակում արտաստահման մշտական բնակության մեկնած 225 հազար բարձրագիներից մոտ 20 տոկոսը բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթությամբ բարձր որակավորում ունեցող մասնագետներ, մասնավորապես ուսանողներ են, ավելի քան 30 տոկոսը որակյալ բանվորական կադրեր: Նկատի ունենալով մեկնողների ազգային կազմը եւ այն տարածաշրջանները, որոնք նրանք լքում են, այսօր կարելի է խոսել նաեւ զգալի էթնիկ փոփոխությունների հնարավորության մասին առաջացում: Մեկնողների մոտ 70 տոկոսը Հեռավոր Արեւելքի, Սիբիրի, Հյուսիսային Կովկասի, ինչպես նաեւ Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի բնակիչներ են: ավելի քան կեսը գերմանացիներ, 25 տոկոսից ավելին ռուսներ, մոտ 5 տոկոսը հրեաներ եւ այլն: Միեւնույն ժամանակ բավական է հավատալ որակավորում չունեցող եւ աշխատաճի վճարող աշխատուժի ներհոսքը այդ տարածաշրջաններ Չինաստանից, Վիետնամից, Կորեայից, ինչպես նաեւ Աֆղանստանից, Եթովպիայից, Սոմալիից եւ այլն:

Մեկնողների հիմնական մասը (62 տոկոս) տեղափոխվել է Գերմանիա, 20 տոկոսը Իսրայել, 13 տոկոսը ԱՄՆ եւ այլն: Իհարկե, նկատելի է այս հարաբերակցությունների եւ մեկնողների ազգային կազմի ոլորտակի կաղը, բայց երկրորդական չեն նաեւ մեկնողների սոցիալ-տնտեսական ակնկալիքները:

Էլ ավելի ազդեցիկ են նախկին խորհրդային հանրապետություններից շարունակաբար աճող ազգաբնակչության արտահոսքի թվերը: Ինչ վերաբերում է Հայաստանի ազգաբնակչության տեղաշարժերին, առայժմ մինչ այժմ մամուլում տպագրված հոդվածները բերող վիճակագրական տվյալներով հանդերձ, չնայած անդրադառնում են որակյալ աշխատուժի եւ ինտելեկտուալ ներուժի խնդիրներին, այնուամենայնիվ դրանցում ավելի շեշտված են հարցի հուզական, բարոյական կողմերը: Կարծում ենք, Հայաստանում ազգաբնակչության տեղաշարժերի առկա միտումները առաջադրում են բավական լուրջ հարցերի եւ խնդիրների մի համալիր, որոնց քննարկումն ու մշակումը խիստ արդիական է այսօր եւ կարող է էլ ավելի կարեւորվել մոտ ապագայում:

Այդ համալիրը ընդգրկում է կրթության, որակավորման բարձրացման, աշխատանքի զբաղվածության, գիտա-տեխնիկական կադրերի եւ ներուժի օգտագործման, մշավորականության սոցիալական դերի, ժողովրդագրության, սերնդափոխության եւ ժառանգորդության, ազգաբնակչության եւ այլ կարեւոր, համադասական նշանակության բնագավառներ: Ակնհայտ է, որ հարցերի եւ խնդիրների համալիրի ուսումնասիրումը դասնանջում է առանձին մասնագետների, հետազոտական խմբերի ու ծառայությունների ջանքերի միավորում: «Ազգը» դատապարտ է նոպաստել այդ աշխատանքի իրագործմանն իր էջերը տրամադրելով բոլոր շահագրգիռ կողմերին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՎԵՆԱՍԱՆ

ԿԻԵՎ

Ուկրաինայի կոմկուսի գործունեությունը վերսկսվում է

ԿԻԵՎ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՍՊՐԵՍ, ՌՈՒՍՊՐԵՍ. Հոկտեմբերի 18 ին՝ նախագահ Լեոնիդ Կուչմայի „ոչաշոնավարության 100 դդ օրը, Ուկրաինայի խորհրդարանը որոշեց չեղյալ հայտարարել հանրապետության ԳԽ նախագահության 1991 թ. հրամանագիրը Ուկրաինայի կոմկուսի գործունեության ժամանակավոր դադարեցման մասին: «Կողմ» արտահայտվեց 210 պատգամավոր, «դեմ» 105, 19 ը ձեռնպահ մնաց, 13 ը բացակայում էր: Բայց թե որքան քվեարկության արդյունքները չեն դյալ համարվեն, ինչպես հայտարարեց ՌՈՒՍ ի ղեկավար Վլադիսլավ Չոռնովիլը, կոմունիստները քվեարկել են բացակայող 5 ժողոպատգամավորների օգտին, որը եւ թույլ է տվել հաստատել տվյալ որոշումը (դրա համար պահանջվում էր 198 պատգամավորի հավանություն): «Հանցավոր կազմակերպությունը պարզապես չի կարող գործել օրինական ճանապարհով», ամփոփեց Չոռնովիլը:

ՎՐԱՍՏԱՆ

Վրաց-թուրք համագործակցություն անվտանգության բնագավառում

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հոկտեմբերի 18 ին հաղորդել է վրացական հեռուստատեսությունը, Թբիլիսի է վերադարձել Վրաստանի ոստանվտանգության ծառայության նախարար Իգոր Գեորգաձեն, որը Թուրքիայում էր գտնվում պաշտոնական այցով: Թուրքիայում նա հանդիպել է այդ երկրի հետախուզության եւ անվտանգության ծառայության ղեկավարների հետ: Քննարկվել են նաեւ երկու երկրների անվտանգության բնագավառում համագործակցելու հարցեր, մասնավորապես թմրանյութերի մաքսանենգության վերացման հիմնահարցեր:

15 դոլլար երկրով անցնելու համար

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Վրաստանի Նախարարների կաբինետի որոշման համաձայն, հանրապետության տարածքով անցնելու համար մարդատար ավտոմեքենաների տերերը, որոնք է վճարեն 15, ավտոբուսների վարորդները՝ 30, բեռնատարների վարորդները՝ 100-180 ԱՄՆ ի դոլլար՝ կախված բեռնատարությունից:

Դարձյալ ռուսական բազաների հարց

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Որոշ տվյալների համաձայն, պաշտոնական այցով Թբիլիսիում է գտնվում ՌԴ զինված ուժերի ներկայացուցիչ գեներալ գնդապետ Գալկինը: Ռուսաստանի Նախարարների խորհրդի պահանջով նա պետք է քննարկի Վրաստանում ռուսական ռազմական բազաների ստեղծման հարցեր:

ՄԱՍՈՒ

ԱՊՀ երկրներում բռնանում են խոսքի ազատության վրա

18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, AIS, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ՏԵՂԵԿԱՏՎ. «Օբշչայա գազետա» թերթը վերջերս մի հոդված է տպագրել, որտեղ բազմաթիվ օրինակներ է բերել լրագրողների վրա կատարված հարձակումների եւ ԱՊՀ երկրներում խոսքի ազատության սահմանափակումների վերաբերյալ: Նախկին խորհրդային հանրապետությունների մեջ Ադրբեջանը առաջինն է այն երկրների ցուցակում, որտեղ այս երեւույթն առավել ակնհայտ է եւ տարածված: Սեպտեմբերի 10 ին Բաքվում, հանրահավաքի ցրելու ժամանակ, ոստիկանությունը ծեծել էր Ռուսաստանի նորությունների գործակալության, «Նովայա գազետա» թերթի եւ թուրքական TRT հեռուստաընկերության թղթակիցներին, իսկ մի առս լրագրող էլ կալանվել էր լրտեսության մեջ կասկածի համար: Չնայած Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի Միացյալ Նահանգներում բազմաթիվ ճանապարհորդությունների ժամանակ հավաստիացումներին, թե Ադրբեջանը «դեմոկրատիայի ոլորտում է», այն մնում է անվիճելի առաջատար խոսքի եւ մամուլի ազատության նկատմամբ բռնությունների թվով: Այստեղ բյուրոկրատները զրկում են լրագրողներին լրատվական աղբյուրներից ինֆորմացիա ստանալու հնարավորությունից:

Հայաստանում նույնպես լրագրողների իրավունքների սահմանափակումը դառնում է ավանդույթ: Օրինակ, Գեորգյան խորհրդի մամլո ծառայությունը մերժել էր «Նոյյան տապան» նորությունների անկախ գործակալությանը տրամադրել ինֆորմացիա, չնայած դա ինքնակամ որոշում էր եւ հակասում էր օրենքին: Դեռ ավելին, «Նոյյան տապանը» զրկվեց նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամլո ծառայությունից ինֆորմացիա ստանալու հնարավորությունից:

Ճնշման մեկ այլ ձեւ է դրամական նեղությունը: Վերջերս իշխանությունները հրամանագրել են, որ անկախ լրագրողներն այսուհետ պետք է վճարեն պաշտոնական «Արմենպրես» գործակալությանը ինֆորմացիա ստանալու համար: Իսկ բանության ամենագայտուն օրինակ էր, երբ անհայտ անձինք ջարդել էին «Գոլոս Արմենիի» թերթի խմբագրատան կահույքը եւ ծեծել թերթի մի քանի աշխատակիցների:

Լրագրողներին ճնշելու մասին բազմաթիվ լուրեր են գալիս Կրգիզստանից: Վերջին օրինակներից է, երբ դատարանի որոշմամբ փակվել էր Կրգիզստանի մայրաքաղաքի թերթերից մեկը, որը մեղադրվում էր հերյուրանքների եւ սահող լուրերի տարածման մեջ: Լատվիայում Ռիգայի դումայի ընդունած բանաձեւի համաձայն, Ռուսաստանում տրվող մի քանի թերթերի տարածումն արգելվել է: Սեպտեմբերի 2 ին Չեչնիայի կառավարությունը պահանջել էր, որ բոլոր ռուս լրագրողներ 24 ժամվա ընթացքում հեռանան հանրապետությունից: Սակայն նրանք չենթարկվեցին այդ պահանջին եւ շարունակում են լուսաբանել Գրոզնիում եւ այլուր տեղի ունեցող իրադարձությունները: Կիսպրովոդսկում քաղաքապետի որոշմամբ ժամանակավորապես դադարեցվել էր մի օրաթերթի տպագրությունը, չնայած շրջադասի բողոքներին: Ռուսաստանի Պրիմորիեի երկրամասի տեղական իշխանություններ փակել էին «անցանկալի» թերթը իշխանավորներին քննադատելու համար:

ԳՐՈԶՆԻ

Պետդումայի պատվիրակությունն այցելեց Չեչնիա

ԳՐՈԶՆԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Չեչենպրես» գործակալության տեղեկություններ համաձայն, այսօր է ժամանել Ռուսաստանի Պետդումայի պատվիրակություն: Խաղաղարար խմբի նպատակն է տեղում տեղեկատվություն ստանալ, տեսնել, թե իրականում ինչ է կատարվում Չեչնիայում: Տոլստոյ Յուրս գլուխը պատվիրակությունը հանդիպում է ունեցել Ռուսական Խասբուլատովի հետ: Ներկայումս խումբը գտնվում է Գրոզնիում, որտեղի հանդիպում ունենա Չեչնիայի նախագահ Ջոխար Դուդայեւի եւ հանրապետության խորհրդարանի դեկավարների հետ:

Հաղորդվում է նաեւ, որ նախագահ Դուդայեւը հայտարարել է, թե ինքն ունի ընդդիմությանը պատասխանող բոլոր անձանց ցուցակները: Նա ընդդիմության կողմնակիցներին կոչ է արել հանձնել զենքը: Միաժամանակ Չեչնիայի գլխավոր շտաբի պետ Ա. Մասխադովն ասել է, թե զորքերն այլեւս ոչ մի տեղ չեն սպասի. «Մինչեւ օրս մենք նրանց խոնում էինք որոշ չեչենների, բայց նրանք օրեցօր լկտիանում են, սպանում երեխաների, արձակում հրթիռներ»: Նա նաեւ ընդդիմության կողմնակիցներին կոչ է արել վայր դնել զենքը, դրա համար տալով 1-3 օր ժամանակ:

ԵԱՀԽ պատվիրակությունը Քիշնեւում

ՔԻՇՆԵՎ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հաղորդեցին Մոլդովայում ԵԱՀԽ առաքելության կենտրոնում, պատվիրակության անդամները կհանդիպեն Մոլդովայի եւ Մերձդնեստրի դեկավարությունների հետ: Անմիջականորեն ծանոթանալով Մերձդնեստրում առկա իրավիճակին, ԵԱՀԽ ներկայացուցիչները կքննարկեն հակամարտության լուծման առաջացման հեռանկարներ:

ՀԱՍԱՐՈՍ

Հատուկ դպրոց դիվանագետների զավակների համար

ՏԱՇԿԵՆՏ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Դպրոցը ստեղծվել է Ուզբեկստանի ժողկրթության նախարարության, ֆինանսական իշխանությունների եւ խաղաղության կոմիտեի նախաձեռնությամբ: Անգլերեն լեզվով եւ ամերիկյան ծրագրերով ու դասագրքերով դասընթացներին մասնակցում են 4-17 տարեկան 35 երեխա: Դպրոցում դասավանդում են ՄԱԿի եւ խաղաղության ամերիկյան կորպուսի կամավորները: Ուսուցման համար վճարում են ծնողները:

Լրահենությունը դատապարտելի է

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ. ՌԻԱ «Նովոստիի» լրատվության առանց հղման օգտագործումը կարող է դատական պատասխանատվության հիմք հանդիսանալ, հայտարարել է լրատվական վերջերի գծով ՌԴ նախագահին կից դատական պալատի նախագահ Անատոլի Վենգերովը: Նրա կարծիքով, «լրահենությունը, ինչպես ՌԻԱ ի, այնպես էլ մնացած գործակալությունների նկատմամբ հեղինակային իրավունքի մասին օրենքի կոպիտ խախտում է եւ կարող է բողոքարկվել դատարանում»:

digitised by A.R.A.R.@

հրատարակություններ

Վերջերս «Ազգ», «Ռեսպուբլիկա Արմենիա» եւ «Գոլոս Արմենիի» թերթերում հոդվածներ տրվեցին Ազգային համայնքների միության կողմից հանրապետության ղեկավարությանն ուղղված դիմումի մասին: Այնտեղ ոգահանջ է ներկայացված, որ ոչ հայ ազգության երեխաներին իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորություն տվի: Մինչդեռ դիմումը ստորագրողների հետ զրույցից դարձվեց, որ ազգային փոքրամասնություններից շատերը իրենց դպրոցն ունենալը անիմաստ են համարում, քանի որ համայնքի անդամներ քաղաքի տարբեր մասերում են բնակվում: Եւ եթե նույնիսկ տանը-դպրոցի հարցն էլ ինչ-որ կերպ լուծվի, յուրաքանչյուր դասարանում մի քանի աշակերտ կտվորի, համայնքի փոքր լինելու դաժանությամբ: Եւ վերջապես ազգային դպրոցն ավարտելուց հետո նրանք հնարավորություն չեն տեսնում: Խոսքն, իհարկե, ռուսական փոքրամասնության մասին չէ, նրանց երեխաների համար հանրապետության դպրոցներում ռուսական դասարաններ կան: Դիմումի մեջ ասվում է նաեւ. «Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքը պետք է բոլորի կողմից անխտիր կատարվի»: «Երբ պետությունը յուրաքանչյուր ազգության համար ազգային դպրոցներ հիմնելու հնարավորություն չունի, մենք կրթության լեզվի ընտրության ազատություն ենք պահանջում ոչ հայ ազգության ենթադրյալ դպրոցներ հիմնելու հնարավորություն տրվի: Դիմումը ստորագրողների հետ զրույցից դարձվեց նաեւ, որ ազգային փոքրամասնությունների՝ ոչ ռուս երեխաների ռուսական կրթություն ստանալն է: Եւ վերջապես ԳԽ-ի կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի մշտական հանձնաժողովը մեղադրվում է ՄԱԿ-ի 1989 թ-ի «Երեխայի իրավունքների մասին» համաձայնագրի (հոդված 29) խախտման մեջ, որն իբր նշանակում է հանրապետության ոչ հայ ազգաբնակչության արտագաղթին: Ինչ վերաբերում է «Լեզվի մասին» օրենքին եւ ՄԱԿ-ի համաձայնագրին, դարձվեց, որ նրանցից շատերն այդ փաստաթղթերը նույնիսկ չեն կարդացել: Այդպես էլ պետք էր սպասել, քանի որ համաձայնագրի մեջ կոնկրետ կրթության լեզվի մասին չի հիշատակվում: Սակայն դրա փոխարեն ասվում է. «Մասնակից պետությունները համաձայնվում են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի նրա մեջ հարգանք դաստիարակելուն այն երկրի ազգային արժեքների նկատմամբ, որտեղ նա ապրում է: Իսկ Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «ՀՀ տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն է»: Իսկ 2-րդ մասը, որպես մասնավոր դեպք նախատեսում. «ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը եւ դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով ոչ-տական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի ղարտաղիր ուսուցմամբ»: Կրթության երրորդ լեզու օրենքը չի նախատեսում: Պահանջելով կրթության լեզվի ընտրության ազատություն եւ դիմելով հանրապետության նախագահին, ԳԽ-ի նախագահին եւ կառավարությանը ոչ-ոչտական լեզվով՝ դիմումի հեղինակներն իրենք են խախտել ՄԱԿ-ի համաձայնագիրը եւ «Լեզվի մասին» օրենքը: Կարելի է բեկուզ միայն ոչտության ղեկավարության նկատմամբ տարական հարգանքից վորել հայերեն: Իսկ մեր օրերում, երբ դպրատիում է՝ գրչի դպրոցով դպրոցներն ամեն կերպ սահմանափակում են դասաժամերը, նրանք խոսում են ռուսական դպրոցներում հայերենի խորացված ուսուցման մասին: Եւ մի՞թե նրանց, ովքեր կմնան Հայաստանում աղերելու, չի հուզում այն հարցը, որ իրենց երեխաների համար ռուսական կրթություն դպահանջելով օտարում են նրանց մեր հասարակությունից: Վաղը ուսուցումը շարունակելու կամ աշխատանքի հարցը լուծելիս, միեւնույն է, նրանք լեզվական դժվարությունների են հանդիպելու:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասն, իհարկե, այսպիսի խնդիր չունի: Նրանք իրենց նախաձեռնությամբ եւ հարգելով Հայաստանի ժողովրդին ու օրենքները, հանախել եւ հանախում են հայկական դպրոցներ եւ հանրապետությունից հեռանալու մտադրություն չունեն: Ինչպես ասաց Ազգային համայնքների միության նախագահ Չատուրը. «Երբ մենք Հայաստանից գնանք, յուրաքանչյուրս իր հետ մի բուռ հող կտանի, քանի որ մեր արմատներն արդեն խորն են Հայաստանում»:

Մենք չենք ցանկանում, որ ազգային փոքրամասնության որեւէ ներկայացուցիչ հեռանա Հայաստանից: Մնացած եւ բոլոր մեր արմատներն ավելի խորանան հայկական հիանալուրջ հողում:

ՀՈՒՓՍԻՄԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ազգային փոքրամասնությունները պահանջում են լեզվի ընտրություն

Մի՞թե նրանք զրկված են դրանից

մարում, քանի որ համայնքի անդամներ քաղաքի տարբեր մասերում են բնակվում: Եւ եթե նույնիսկ տանը-դպրոցի հարցն էլ ինչ-որ կերպ լուծվի, յուրաքանչյուր դասարանում մի քանի աշակերտ կտվորի, համայնքի փոքր լինելու դաժանությամբ: Եւ վերջապես ազգային դպրոցն ավարտելուց հետո նրանք հնարավորություն չեն տեսնում: Խոսքն, իհարկե, ռուսական փոքրամասնության մասին չէ, նրանց երեխաների համար հանրապետության դպրոցներում ռուսական դասարաններ կան: Դիմումի մեջ ասվում է նաեւ. «Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքը պետք է բոլորի կողմից անխտիր կատարվի»: «Երբ պետությունը յուրաքանչյուր ազգության համար ազգային դպրոցներ հիմնելու հնարավորություն չունի, մենք կրթության լեզվի ընտրության ազատություն ենք պահանջում ոչ հայ ազգության ենթադրյալ դպրոցներ հիմնելու հնարավորություն տրվի: Դիմումը ստորագրողների հետ զրույցից դարձվեց նաեւ, որ ազգային փոքրամասնությունների՝ ոչ ռուս երեխաների ռուսական կրթություն ստանալն է: Եւ վերջապես ԳԽ-ի կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի մշտական հանձնաժողովը մեղադրվում է ՄԱԿ-ի 1989 թ-ի «Երեխայի իրավունքների մասին» համաձայնագրի (հոդված 29) խախտման մեջ, որն իբր նշանակում է հանրապետության ոչ հայ ազգաբնակչության արտագաղթին: Ինչ վերաբերում է «Լեզվի մասին» օրենքին եւ ՄԱԿ-ի համաձայնագրին, դարձվեց, որ նրանցից շատերն այդ փաստաթղթերը նույնիսկ չեն կարդացել: Այդպես էլ պետք էր սպասել, քանի որ համաձայնագրի մեջ կոնկրետ կրթության լեզվի մասին չի հիշատակվում: Սակայն դրա փոխարեն ասվում է. «Մասնակից պետությունները համաձայնվում են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի նրա մեջ հարգանք դաստիարակելուն այն երկրի ազգային արժեքների նկատմամբ, որտեղ նա ապրում է: Իսկ Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «ՀՀ տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն է»: Իսկ 2-րդ մասը, որպես մասնավոր դեպք նախատեսում. «ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը եւ դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով ոչ-տական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի ղարտաղիր ուսուցմամբ»: Կրթության երրորդ լեզու օրենքը չի նախատեսում: Պահանջելով կրթության լեզվի ընտրության ազատություն եւ դիմելով հանրապետության նախագահին, ԳԽ-ի նախագահին եւ կառավարությանը ոչ-ոչտական լեզվով՝ դիմումի հեղինակներն իրենք են խախտել ՄԱԿ-ի համաձայնագիրը եւ «Լեզվի մասին» օրենքը: Կարելի է բեկուզ միայն ոչտության ղեկավարության նկատմամբ տարական հարգանքից վորել հայերեն: Իսկ մեր օրերում, երբ դպրատիում է՝ գրչի դպրոցով դպրոցներն ամեն կերպ սահմանափակում են դասաժամերը, նրանք խոսում են ռուսական դպրոցներում հայերենի խորացված ուսուցման մասին: Եւ մի՞թե նրանց, ովքեր կմնան Հայաստանում աղերելու, չի հուզում այն հարցը, որ իրենց երեխաների համար ռուսական կրթություն դպահանջելով օտարում են նրանց մեր հասարակությունից: Վաղը ուսուցումը շարունակելու կամ աշխատանքի հարցը լուծելիս, միեւնույն է, նրանք լեզվական դժվարությունների են հանդիպելու:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ մասն, իհարկե, այսպիսի խնդիր չունի: Նրանք իրենց նախաձեռնությամբ եւ հարգելով Հայաստանի ժողովրդին ու օրենքները, հանախել եւ հանախում են հայկական դպրոցներ եւ հանրապետությունից հեռանալու մտադրություն չունեն: Ինչպես ասաց Ազգային համայնքների միության նախագահ Չատուրը. «Երբ մենք Հայաստանից գնանք, յուրաքանչյուրս իր հետ մի բուռ հող կտանի, քանի որ մեր արմատներն արդեն խորն են Հայաստանում»:

Մենք չենք ցանկանում, որ ազգային փոքրամասնության որեւէ ներկայացուցիչ հեռանա Հայաստանից: Մնացած եւ բոլոր մեր արմատներն ավելի խորանան հայկական հիանալուրջ հողում:

ՀՈՒՓՍԻՄԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐՎԱ ԽՆԴԻՐ

Անանուն, անհայտ, անապագա ճակատագրեր

Մեր աղագան մեր երեխաների մեջ է

Անգրագետ, բարիառաջդիկ, մուրացկան երեխաների մե՞ջ

Մուրացկան երեխաներ: Սա մի նոր խավ է, մի նոր աստիճանի շերտավորում մեր մեջ: Մենք ազգովին շատ մեծահոգի ենք, առատաձեռն ու խղճից բույլ, տալիս ենք ու շտապում հեռանալ, շատերս էլ զգվում ենք այդ ցնցոտիավոր, կեղտոտ մանչուկներից, մեր կարմրաթուշ ու առողջ երեխաներին հեռու պահում դրանցից: Մեզանից քանի՞սն են մոտեցել, իրական, լուրջ օգնության ձեռ մեկնել նրանց...

Մի երեխայի ճակատագիր

Այս երեխային շատերդ եք հանդիպել մետրոյի «Զորավար Անդրանիկ» կայարանի ստորգետնյա անցումի տարածքում: 7 տարեկան Արմինեն դժբախտ դատապարտի հետեւանքով դարձել է հաշմանդամ եւ սնոտված է մուրալ աղաղակելու գոնե իր բաժին ծախսերը, թեեւ իրականում ստացված գումարը բավականացնում է միայն սնվելու համար:

Ոսկանյան Արմինեին կարելի է հանդիպել մոր կամ մորաքրոջ հետ: Հայրը մահացել է 1988 թ-ին, մայրը Կարինեն, նախկին հավաքարար, հիմա չի աշխատում: Ունի երեք երեխա, երկուսը դպրոցահասակ են, իսկ կրտսեր Արմինեն, թեեւ արդեն տարիքն է, բայց ի վիճակի չէ դպրոց հաճախել: Նրանց դպրոցները շատ ծանր են տանը միանգամայն դասարկ է, կլոսմանդ բախտն ու մահճակալը ամբողջ կահավորանքն են կազմում, ջուր գրեթե չեն ունենում, էլեկտրականությունը սակավ է:

Արմինեի այրվածքները սարսափելի են ու խորը, մարմնի գրեթե կեսն այրված է, մաշկի ձգվածության դատապարտությամբ երեխան չի կարողանում երկար ժամանակ փակ դահիճ բերանը:

Մի խոսքով, երեխային պետք է օգնել, աղաղակել նրա բաժինը: Վիրահատությունները եւ առհասարակ նրա աղաղակն: Մեր երկրում հիմա արդեն կան մի շարք կազմակերպություններ, ֆոնդեր, կոմիտեներ, որոնք զբաղվում են ծանր դպրոցներում գտնվող ընտանիքների երեխաների, հաշմանդամների կյանքի դպրոցների բարելավման հարցերով: Սակայն երեխայի մոր ու մորաքրոջ վկայությամբ, իրենցով ոչ ոք չի հետաքրքրվում, ոչ ոք չի օգնում նույնիսկ դիմելու դեղերում:

Հասկանալի է, որ յուրաքանչյուր կազմակերպություն ունի որոշակի ուղղվածություն եւ օգնում է որոշակի խավի, բայց մի՞թե Արմինեն ու նրա նման երեխաները առհասարակ որեւէ խավի չեն դասականում, դուրս են հասարակությունից: Այդ դեղերում ո՞վ կարող է, ո՞վ պետք է օգնի նրանց: Չէ՞ որ, ի վերջո մենք ունենք միլիոնատերերի մլուքյուն: Գուցե նրանցից մեկնումեկը իր հովանավորության տակ կառնի այս դժբախտ երեխային եւ կփորձի թեթեւացնել նրա ծանր վիճակը:

Մորաքույրը դատում է, որ շատերը Արմինեի կողքով անցնելիս շրջում են դեմքը եւ բի տակ մոթնում, թե այս տհաս ու ի ծնե հաշմանդամը որտեղից: Այդ դատապարտով էլ նրանք երեխայի նկարները մինչեւ այրվելը եւ դրանից հետո միշտ վերցնում են հետները մարդկանց ցույց տալու համար:

Այսօր քանի-քանի այդպիսի երեխաներ կան, որոնք ճակատագրի բերումով մանկական խաղերն ու խաղալիքները բողած, դառնում են մուրացկաններ ու շուտով հասկանում, որ դա իրենց ճակատագիրն է:

Մենք, որ խղճի խայթ զգալով կամ ինքներս մեզ գոհացնելու համար մի քանի դրամ ենք նետում, արդյոք իսկապե՞ս օգնում ենք նրանց, թե՞ հակառակը, այդ գոռշերը տալով շեշտում ենք նրանց տեղը հասարակության հետնախորհրդում:

Թափառաջդիկ մուրացկաններ

Արվաճենից գաղթած մի ընտանիք է թափառում Երեւանի փողոցներում: Մայր ու երեք երեխաներ մուրալով են ձեռք բերում իրենց օրվա սնունդը: Կացարան չունեն, երեկոն ինչ են փողոցում բաց երկնքի տակ: Մայրը չէր դատապարտում հարցերիս ու երբ կասկածեցի, թե հարամ է, երեխաներից ավագը 12 տարեկան Զինան դատապարտեց, թե մայրը դարձրեցես ամաչում է: Զինան դատմեց, որ իրենք Արվաճենից են, փախստականներ են, իրենց տունը վրվել-քանդվել է, իրենց նստեցրել են ավտոբուս ու բերել Երեւան, իսկ այստեղ նրանք մնում են փողոցում: Ոչ ոք նրանց մասին չգիտի, ոչ ոք նրանցով չի հետաքրքրվում:

Այս վարդիկ ամայելով իրենց վիճակից, հագուստից ու դառը ճակատագրի նորանոր հարվածներից, չգիտեն ո՞ւմ դիմեն, չեն հավատում ոչ ոքի ու ոչնչի: Երբ ի վերջո կարողացա մորը տրամադրել խոսելու, կցկտուր բացատրեց, որ դիմել են ինչ-որ տեղ (չկարողացա ոչ մի կերպ հասկանալ, թե ուր են դիմել), որտեղ դատապարտել են, թե օգնել չեն կարող, որ պետք է աղերեն ժողովրդի հաշվին:

Ու այս ընտանիքը, որ Արվաճենում մի ժամանակ տուն ուներ, հարազատ օջախ, աշխատանք, աղքատ էր բոլոր ընտանիքների նման առօրյա հոգսերով, այժմ դարձել է թափառաջդիկ մուրացկան: Երեխաները, որ մի ժամանակ դպրոց էին հաճախում, այժմ կիսամերկ, կեղտոտ ցնցոտիների մեջ մոտենում են անցորդներին հացի փող մուրալու:

Օրինակները շատ են դատապարտությունները շատ, ամեն մեկն ունի իր անցյալն ու դառը ճակատագիրը, իսկ ապագա՞ն...

Աղաղակ կախված է որոշակի կազմակերպություններից, որոշակի անձանցից եւ շտապիրք միջոցառումներից: Չէ՞ որ ժողովուրդն իմն էլ ծանր դրության մեջ է, եւ իր անձնական հոգսերը հոգալուց զատ մեկ ուրիշին խղճալու ուղղակի հնարավորություն չունի:

Ի վերջո, ինչպես ասում են, մեր աղաղակն մեր երեխաների մեջ է: Մեր սոված, անատոդ, անգրագետ, փախստական, բարիառաջդիկ, մուրացկան երեխաների մե՞ջ:

ՌՈՒԶԱ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ,
Ռազմարդ

ՊԱՄՓԼԵՏ

Որտեղից է սկսվում պատմությունը եւ որտեղ վերջանում

Կարդալով «Ազգում» տպագրված հարցազրույցները թուրքական առաջատար կուսակցությունների լիդերների հետ, ակամա հիշեցի մոլլա Նասրեդինի հետ կապված մի պատմություն. երբ նրան հարցնում են թե՝ մոլլա, ինչո՞ւ ես անընդհատ նույն լարի վրա նվագում, սա պատասխանում է, թե՝ ես ճիշտ տեղը գտել եմ, ուրիշները ինձ նման վարպետ չեն, դրա համար ես տարբեր լարերի վրա ծնգծնգացնում...

Հենց խոսքը հասնում է հայերին, մեր թուրք առաջնորդները վերոհիշյալ զվարճախոսի պես նույն «լարն» են ծնգծնգացնում, հավանաբար կարծելով, թե «ճիշտ տեղն են գտել»: Եւ միաբերան խորհուրդ են տալիս, թե կարիք չկա էլփորելու անցյալը, առաջ նայեք: Առհասարակ մենք շա՞տ մեծահոգի ենք, բարեկի՞ր եւ ձեզ վրա այլեւս չենք բարկանա, եթե տհաճ խոսակցություններ չբացեք ցեղասպանության հարցը...

Մեզ համար, ինչ խոսք, նորություն չէ, թե Թուրքիայում ինչ դիրքորոշում ունեն հայ-թուրքական հարաբերությունների եւ դրանք մթագնող դարասկզբի արյունոտ իրադարձությունների նկատմամբ: Հենց առիթ է ներկայանում, Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաներն ու դիվանագետները, սրանց դամբաբ լրագրողներն ու պատմաբանները շուտասելուկի պես վրա են բերում, թե ի՞նչ ցեղասպանություն, միայն ազգամիջյան բախումներ են տեղի ունեցել թուրքերի ու հայերի միջեւ: Եւ այդ բախումներում իրենց ցեղակիցները ի՞նչ ասես, որ չեն խաբել «ամբարիշտ ու երախտամոռ» հայերի ձեռքից:

Սակայն հնարավոր չէ մախաթը պարկի մեջ թաքցնել: Դա հասկացել են նաեւ թուրքերը եւ վերջերս փորձել են փոխել տակտիկան: Արդեն դժկամորեն մոլորում են՝ ինչ եղել է եղել, մոռանանք, իսկ անցյալը թողնենք պատմաբաններին:

Լավ, ընդունենք, թե «մոռացանք», եւ 1915-1923 թվականների «կնճռոտ» հարցերով պիտի զբաղվեն միայն պատմաբանները: Սակայն նորից մի «նենգ» հարց է ծագում. ի՞նչ է պատմությունը, որտեղի՞ց է սկսվում այն եւ որտեղ վերջանում:

Ի դեպ, թուրքերն էն գլխից յուրաքանչյուր մոտեցում են ցուցաբերել պատմության նկատմամբ, թեեւ այս առարկայով սկսել են զբաղվել վերջերս: Թուրք առաջին պատմիչ Փեյեւին ապարեզ է եկել միայն տասնյոթերորդ դարում: Սա այս «ուշացման» պարագան բացատրում է, թե «...թուրքերը մինչ այդ զբաղված էին ոչ թե պատմություն գրելով, այլ՝ պատմություն կերտելով»: Դե, մեր դարաբաղցի եղբայրներն էլ պատմություն են կերտում: Միայն թե այս «պատմությունը» թուրքերի ճաշակին չի համապատասխանում: Այդ է պատճառը, որ այստեղ չենք ասում՝ անցածը անցած է, դրանով թող պատմաբանները զբաղվեն: Եւ շարունակ, ինչպես Նասրեդինը թառի լարը, ծնգծնգացնում են. «Հայերը պիտի ազատեն ադրբեջանական գրավյալ տարածքները, ներառյալ՝ Շուշին ու Լաչինը»:

Սակայն 1988 թվականից ի վեր տեղի ունեցածը նույնպես անցյալ է, եւ հետեւաբար, թուրքերի առաջ բաված թեզի համաձայն, դրանով պիտի զբաղվեն միայն պատմաբանները: Չէ՞ որ ճգդիս սահմանազատում գոյություն չունի, թե որտեղից է սկսվում պատմությունը եւ որտեղ վերջանում: Ի՞նչ տարի առաջ, թե՞ ութսուն տարի առաջ...

Մենք ուրիշ կերպ ենք նայում պատմությանը: Եկող տարի նշելու ենք Հայոց Ցեղասպանության 80-րդ տարելիցը, աշխարհին հիշեցնելով ոչ միայն մեր միլիոնավոր անմեղ զոհերի, այլեւ բռնազավթված Հայրենիքի մասին եւ, իհարկե, իրենց նախնիների հողի վրա ապրելու սփյուռքահայերի իրավունքը... Բացի այդ, 1995-ին լրանում է Սեւրի պայմանագրի 75 ամյակը: Իսկ սա ուժը չկորցրած քաղաքական փաստաթուղթ է, որի գոյությունը իսկական մղձավանջ է թուրք պետական ու քաղաքական գործիչների համար: Դե, նրանք անհանգստանալու լուրջ պատճառներ ունեն: Չէ՞ որ այդ պայմանագիրը ստորագրող պետությունները չեն հրաժարվել դրանից: Բացառությամբ՝ Թուրքիայի: Մեկ էլ՝ բոլշեւիկյան Ռուսաստանի, որն այլեւս գոյություն չունի:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ,

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Խաղաղության մրցանակը՝ Ռաբինին, Պերեսին եւ Արաֆաթին

1994 թ. խաղաղության Նոբելյան մրցանակը որոշվեց շնորհել Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինին, արտգործնախարար Շիմոն Պերեսին եւ Պաղեստինի ազատագրման կազմակերպության նախագահ Յասեր Արաֆաթին:

Նորվեգիայի խորհրդարանի կողմից ընտրվող եւ հինգ մարդուց կազմված Նոբելյան կոմիտեի վճիռը դժվար չէր կանխագուշակել: Սակայն հարց ծագեց, կոնկրետ ում հանձնել խաղաղության արժավենու տերեւը: Մի կողմից, ինքնաբերաբար ծագում էին Իսրայելի վարչապետ Ռաբինի եւ ՊԱԿ-ի ղեկավար Արաֆաթի թեկնածությունները, որոնք գլխավորել էին պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունները: Մյուս կողմից, բանակցությունների սեղանի շուրջը գործնական վիրխարի աշխատանք էին կատարել Աբու Մազենը (ՊԱԿ), Ուրի Սավիրը (Իսրայել) եւ ԱԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, նոր վեցնջի Թերիե Ռոդ Լարսենը:

Նոբելյան կոմիտեում ծավալված վիճաբանությունների մասին նախօրոք պատմել էր Օսլոյում լույս տեսնող «Աֆտենպոստեն» թերթը, ինչը ըստ էության դարձավ սենսացիա, քանի որ կոմիտեն սովորաբար տեղեկատվության արահոսք թույլ չի տալիս, եւ որոշման հրապարակումից առաջ ոչ ոք դրա մասին չի իմանում:

Իսկ այս անգամ նաեւ հայտնի դարձավ, որ կոմիտեի անդամներից մեկը՝ նախկին նախարար եւ քրիստոնեական ժողովրդական կուսակցության նախկին նախագահ Կորե Քրիստիանսենը սպառնացել է դուրս գալ կոմիտեի կազմից, եթե դափնեկիրների թվում հայտնվի Յասեր Արաֆաթը:

74 ամյա Կորե Քրիստիանսենը գտնում է, որ Յասեր Արաֆաթը մեղսակից է ահաբեկչական այն գործունեությանը, որ Իսրայելի դեմ ձեռնարկել էր Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը:

Սա աննախընթաց դեպք է. նման բան չէր եղել, որ կոմիտեի անդամներից մեկը փորձեր իր գործընկերների վրա հրապարակային ճնշում գործադրել, սպառնալով հրաժարականով:

Մինչդեռ կոմիտեն իր վճիռը պատճառաբանում է նրանով, որ մրցանակը շնորհվում է ոչ թե անձանց անցյալի գործողությունների, այլ վերջին մեկ տարվա գործունեության համար: Որոշ մեկնաբանների կարծիքով, եթե Իսրայելի վարչապետն իրոք արժանի է այդ մրցանակին, քանի որ ի վերջո համաձայնեց տարածքներ զիջել հաշտության դիմաց, ապա Արաֆաթը եղել եւ մնում է ահաբեկչության կողմնակից, մասնավորապես այն պատճառով, որ ոչինչ չի ձեռնարկում իսլամական «Համաս» կազմակերպության ահաբեկչական արարքների դեմ:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Պահպանողականների բուռն խորհրդաժողովը

Պահպանողականներն Անգլիայում իրենց դրսեւորեցին լեյբորիստներից ավելի սանձարձակ կերպով: Մանավանդ երիտասարդ պահպանողականները: Ամբողջ անցյալ շաբաթվա ընթացքում Բորնմուտում անցկացված բորիների ամենամյա խորհրդաժողովի պատվիրակների ու հյուրերի համար կազմակերպված պարահանդեսներից մեկում ինչեր ասես չէին կատարվում: Շատերը պարզապես հարբել եւ իրենց կորցրել էին, ճիշտ է, կարողանալով անբերի վիճակում պահպանել սեփական ֆոտոները, օպտած կրծքալները եւ բիքենիկածու փողկապները:

Կային նաեւ իսկական «հերոսներ», մի ամբողջ պահպանողական, որը պարահանդես էր եկել շոտլանդական շրջազգեստով, վերխաչեց այն, ֆոտոթղթակիցներին ցույց տալով, որ դրա տակ ոչինչ չկա: Երբ նա նման բան անելիս փողոցում, անհայտ կծերբակալվեր հասարակական կարգի խախտման համար:

Երիտասարդ բորիների խժդժությունները մանավանդ անհեղի էին թվում այն պատճառով, որ թե վարչապետ Ջոն Մեյջորը եւ թե ներքին գործնախարար Մայքլ Հաուարդը խորհրդաժողովում բավական ժամանակ էին վատնել պատվիրակներին համոզելու, թե ներկայիս կառավարությունը ինչպիսի վճռականությամբ է մտադիր պայքարել անօրինականության, հանցագործությունների եւ այն ամենի դեմ, ինչը չի համապատասխանում բարոյականության եւ բարեվայելչության վերաբերյալ ավանդական պատկերացումներին:

Ասենք խորհրդաժողովը նաեւ ընդհանուր առմամբ բավական տարօրինակ տեսարան էր ներկայացնում: Այն ցույց տվեց, որ կառավարող կուսակցության եւ նույնիսկ կառավարության շարքերում միասնություն չկա խիստ էական հարցերի առթիվ, այդ թվում այն հարցում, թե Բրիտանիան ինչպիսին է պատկերացնում իր ապագան եւրոպական տանը: Նախարար Մայքլ Պորտիլոն նույնիսկ վարչապետից էլ շատ բուռն ծափահարություններ արժանացավ իր այն ճառի շնորհիվ, որի համաձայն Լոնդոնը պետք է ամբողջ ուժով դիմակայի Եւրամիության բնադրանին: Միայն վարչապետի հանդեպ իր օրինաչափության երեւութականությունը պահպանելու անհրաժեշտությունը Պորտիլոյին թույլ չտվեց պահանջել, որ Բրիտանիան դուրս գա միասնական Եւրոպայի կազմից:

Իհարկե, եղան նաեւ լուսավոր կողմեր. հենց խորհրդաժողովի վերջում ստացվեց հերթական տնտեսական ամփոփագիր, որտեղ արձանագրված են բրիտանական կոլլինեռում սպանի մակարդակի հնացած անկում եւ գործազուրկների թվի կրճատում: Մեյջորի կաբինետը կարող է այդ վիճակագրությունը գրի առնել իր օգտին:

Հետաքրքիր է լսել, թե որքան անզուսպ են պահպանողականները լեյբորիստներին վարկաբեկող իրենց արտահայտություններում: Նրանք գլխավոր ընդդիմադիր կուսակցությունը եւ մասնավորապես դրա նոր ղեկավար Թոնի Բլեյրին հանցագործում էին գրեթե վողոցային հայհոյանքներ, ի թիվս այլ բաների մեղադրելով Բրիտանիայի ազգային շահերին դավաճանելու մեջ: Երբեմն այնպիսի տպավորություն էր ստեղծվում, թե դա ոչ թե հարգարժան բորիների խորհրդաժողով է, որոնք կոչված են մարմնավորել հանգստությունը, սառնարյունությունը եւ բարեկիրթ ձեւերը նույնիսկ ամենաբեմ քաղաքական մենամարտերում, այլ Պեղոմանի կամ նույնիսկ խոսքուլատովյան Գերագույն խորհրդի նիստերի դահլիճ:

Պահպանողականներ սակայն չեն կորցրել իրենց ամենաբնորոշ կարողությունը: Օրինակ, լուսանկարիչների առջեւ շրջազգեստը բարձրացրած ազդանան հաջող օրը խելքի գալով հայտարարեց. «Ես ինձ պահեցի աղուշի պես: Ըստ երեւույթին, երկար չեմ մնա կուսակցության շարքերում»:

«Իզվեստիա», 15 հոկտեմբեր

ՃԱՊՈՆԻԱ

Կենձաբուրո Օե. Ամենաշատ կարդացած գրողը

Գրականության Նոբելյան մրցանակը Կենձաբուրո Օեին շնորհելու որոշումը Ճապոնիայում ընկալվեց որպես հանրազգային իրադարձություն, քանի որ ճապոնացիների մեջ 26 տարի առաջ մեխարհի ամենահեղինակավոր գրական այդ մրցանակին արժանացել էր միայն Յասունարի Կավաբատան:

Կենձաբուրո Օեն 59 տարեկան է: Նա ծնվել է Ճապոնիայի փոքրիկ գյուղերից մեկում. Տոկիոյի համալսարանում սովորել ֆրանսիական բանասիրություն, եռանդագին մասնակցել հակապատերազմական շարժմանը եւ չնայած խաղաղ մտավորականի կերպարանքին, կլոր ակնոցին եւ նուրբ կազմվածքին, ձեռք է բերել սկզբունքային եւ խիստ հայացքների տեր մարդու համբավ, որը հիշ է հակված փոխզիջումների:

Գրական փառքի նա արժանացավ դեռ ուսանողական տարիներին, երբ Ակուտագավայի անվան ճապոնական մրցանակ ստացավ 1958 թ. իր հրապարակած «Անասունների խնամքը» առաջին վիպակի համար: Ինչպես վերհիշում է ինքը՝ Օեն, նա այն ժամանակ ինքն իրեն որոշել էր. «Եթե մրցանակ չինի, կդառնամ գրող, եթե չլինի, կգ[illegible]վեմ բանասիրությամբ եւ դասախոսական գործունեությամբ»: Դասախոսությունը հարկ եղավ հետաձգել. Կենձաբուրո Օեի կյանքում գլխավորը դարձավ գրականությունը:

Քննադատների կարծիքով, Օեի ստեղծագործությունը սերտորեն կապված է ոչ այնքան ճապոնական գրականության ավանդույթների, որքան եւրոպական գրականության եւ առաջին հերթին Դոստոեւսկու, Սարտրի, Ստենդալի ազդեցության հետ: Ի դեպ, անձամբ Օեին արժատների որոնումը հիշ է հետաքրքրում, եւ նա առհասարակ իրեն համարում է ավելի շատ ընթերցող, քան գրող, պնդելով, թե Նոբելյան մրցանակի բարձունքները հիշ են հասանելի:

Գրական գլխագործոցներ ստեղծելու համար Օեն ամենաշատ ժամանակ է հատկացրել Հիրոսիմայի ողբերգությանը: Նա ոչ թե ծեւականություն է, այլ անկեղծ համոզմունք, որի համաձայն գրական նահատակների թվին դասվելը բուն գրական գործունեության հետ կապ չունի: Եւ պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի շնորհման առթիվ շնորհավորանքներ ընդունելով, Օեն հավաստեց ավելի վաղ իր ընդունած այն որոշումը, որ եռագրության վերջին մասի ավարտից հետո, որի վրա հիմա ինքն աշխատում է, վեպերին ու վիպակներին չի վերադառնալու: Կենձաբուրո Օեն հավատարիմ է մնացել ինքն իրեն:

Հոկտեմբերի 13-ի երեկոյան՝ մրցանակի շնորհման օրը, Ճապոնիայում ամենաերջանիկ մարդը Կենձաբուրո Օեի 93 ամյա մայրն էր: Իմանալով որդու Նոբելյան մրցանակի մասին, նա ասաց. «Որ նա շատ բանի կհասնի, ես գիտեի արդեն այն ժամանակ, երբ Օեն սկսել էր ծառերի վրա բարձրանալ ոչ թե զվարճանալու, այլ որպես զի իրեն չխանգարեն գրքեր կարդալ»: Մնում է ավելացնել, որ իր գրական աշխատանքը չխանգարելու համար Օեն դարձել է ճգնակյաց. նա տնից դուրս է գալիս շաբաթական միայն 2-3 անգամ եւ այն էլ բացառապես գործերով, աշխատում է նաեւ գիշերը, իր գրածներն արտագրելով երբեմն 5-6 անգամ:

ԹՈՒՐՔԻԱ

«Կարեւոր ճանապարհ թյուրք ժողովուրդների համար»

Ստամբուլի գագաթաժողովն ավարտվեց

Սկիզբը էջ 1

Սակայն Դարաբաղի խնդրի կարգավորման ընթացքը արդեն որերորդ անգամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է Ադրբեջանի նախագահի Թուրքիա կատարած «օրինաչափական» այցելություններից:

Գագաթաժողովում ելույթ ունեցավ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը նշելով, որ երկար ժամանակ Թուրքիան միակ թյուրքական պետությունն էր, սակայն երեք տարի առաջ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դրան գումարվեցին եւս հինգ պետություններ, եւ այժմ Թուրքիան «միայնակ չէ համաբխարհային ասպարեզում»:

Պատմելով այն մասին, որ նորանկախ պետություններում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, Դեմիրելը նշեց, որ այդ երեք տարիներին սկսվել է տնտեսական, մարդասիրական եւ այլ ոլորտներում 178 նախագծերի իրականացումը, որոնց ընդհանուր գումարը կազմում է 3 միլիարդ դոլար: Նրա խոսքերով, եթե 1992 թ. Թուրքիայի եւ թյուրքական մյուս պետությունների միջեւ շրջանառության ընդհանուր ծավալը կազմում էր 270 միլիոն դոլար, ապա այժմ հասնում է միլիարդների:

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը թյուրքական պետությունների ղեկավարներին հիշեցրեց, որ իր երկիրը նրանց ցույց է տվել ընդհանուր առմամբ 171 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն: «Թուրքիան բոլոր թյուրքական պետությունների համար պատուհան է դեպի եւրասիա», եզրակացրեց նա:

Խորհրդաժողովն ավարտվեց: Թյուրքական պետությունների ժամանած ղեկավարները վստահ էին, որ Թուրքիան կկատարի իր բոլոր խոստումները եւ իրենց կօգնի դուրս գալ տնտեսական ապեցալի ծգնաժամից: Թյուրքական պետությունների արդեն երկրորդ գագաթաժողովն այդպես էլ չստեղծեց ինչ-ինչ ղեկավար կառույցներ, որոնք կգբաղվեին կազմակերպական հարցերով:

Ամեն ինչից երեւում է, որ Թուրքիան չի ուզում բաց թողնել մնացյալ ամբողջ թյուրքական աշխարհի մեջտեղ լիա դառնալու իր հնարավորությունը:

Միջինասիական պետությունների շուկաները գրավում են Թուրքիայի ղեկավարության ուշադրությունը, իսկ դրանց տիրելու համար հարկավոր է այդ ամենին խաղաղական ձեւակերպում տալ:

ՈՒՈՅԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Թուրք լրագրողները մտահոգված են ատոմակայանի վերագործարկմամբ

Սկիզբը էջ 1

գտնվող 17 թուրք լրագրողները պետնախարար Սեդրուի Թաշճյանի հետ հանդիպման ժամանակ: Սեդրուի Թաշճյանը, որը թուրքերենով ողջունեց լրագրողներին, այնուհետեւ անգլերենով պատասխանեց նրանց հարցերին, հիմնականում ներկայացնելով Հայաստանի էներգետիկ համակարգում ստեղծված իրավիճակը, ատոմակայանի բացման եւ փակման պատճառները, նշելով, որ ատոմակայանի վերագործարկումը խիստ կենսական նշանակություն ունի հայ ժողովրդի եւ մեր հանրապետության համար:

«Մենք այլընտրանք չունենք եւ ստիպված ենք բացել ատոմակայանը, նշեց Սեդրուի Թաշճյանը, միաժամանակ թուրք լրագրողներին հիշեցնելով, թե խորհրդային տարիներին նույնիսկ Հայաստանն էր էլեկտրաէներգիա մատակարարում Թուրքիային այդ ատոմակայանի միջոցով: Իսկ ինչ վերաբերում է անվտանգությանը, ապա Հայաստանն առավել քան որեւէ այլ երկիր մտահոգված է վերագործարկմամբ: Թուրք լրագրողները ցանկություն հայտնեցին նաեւ նկարահանել ատոմակայանը, ինչին Սեդրուի Թաշճյանը խոստացավ աջակցել:

«Հյուրրիեթ», «Միլիեթ» թերթերի «Անատոլու» կիսապաշտոնական գործակալության, «Կանալ 6», «Կանալ բի», «Թյուրքեյ» հեռուստաընկերությունների թղթակիցները երեկ հանդիպումներ ունեցան նաեւ ՀՅԴ-ի եւ ՀՀՇ-ի ներկայացուցիչների հետ, ելույթ ունեցավ Լորիս Ճգնավորյանի գլխավորած ֆիլհարմոնիկում: Այսօր նրանք կհանդիպեն ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Ասարգսյանի հետ, ծաղիկներ կդնեն Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին, կմասնակցեն հայ լրագրողների հետ կազմակերպված կլոր սեղանին: Միջոցառումը հովանավորում է «Լենսայ» հայ գերմանական համատեղ ձեռնարկության Հայաստանի բաժանմունքը: Այսօր թուրք լրագրողները կհանդիպեն նաեւ ԱԺՄ լիդերների հետ:

Ա.Հ.

ՄՈՍԿՎԱ

Անգլիական մամուլը մեկնաբանում է թագուհու այցը

ՄՈՍԿՎԱ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անգլիայի թագուհի Էլիզաբեթ Երկրորդի Ռուսաստան կատարած այցին են նվիրվել բազմաթիվ մեկնաբանություններ եւ հոդվածներ համաշխարհային մամուլում: Անգլիական մամուլը մասնավորապես նշում է թագուհու գոհունակությունը ընդունելությունից:

Ռուսաստանի ղեկավարը թագուհուն ողջունեց Բուկինգեմյան պալատի ամենամեծ դահլիճի չափերը գերազանցող Կրեմլի Գեորգյան դահլիճում:

Թագուհին, որը Ռուսաստան այցելած առաջին բրիտանական միապետն է, գոհ էր ընդունելությունից, իսկ նախագահ Ելցինն ուրախ էր, որ վերջապես իրեն հաջողվեց իրականացնել այսպիսի կարեւոր դիվանագիտական քայլ»:

«Թագուհին անբարոյական բավականություն ստացավ Մոսկվայի օդակայանում տեղի ունեցած հանդիպումից, ինչպես նաեւ Կրեմլի Գեորգյան դահլիճի հեմիսֆերային ընդունելությունից», գրում է «Գարդիանը»:

«Թագուհու այցը Ռուսաստան խորհրդանշում է ռուս-բրիտանական հարաբերությունների նոր ժամանակաշրջանի սկիզբը», գրում է «Դեյլի թելեգրաֆը»:

Մեկնաբանելով վարչապետ Չեռնոմիրդինի բացակայությունը օդակայանի հանդիպման ժամանակ, «Դեյլինեյ թայմս» նշում է, որ «այդ միջադեպը կրկին ցույց է տալիս ռուսական կառավարության շարք տիրոջ իմպրովիզացիոն մթնոլորտը»: «Դեյլի տելեգրաֆը» հեգնանքով վերաբերվելով երկու երկրների արտաքին գործոց նախարարների հանդիպման չկայացման վերաբերյալ բրիտանական ԱԳՆ բացատրություններին, նշում է, որ «Կրեմլի եւ Ուայթհոլի միջեւ դիվանագիտական վեճը առավել արտահայտիչ էր երեկ, երբ Ռուսաստանի ԱԳ նախարար Անդրեյ Կոզիրեւն արհամարհեց բրիտանական դիվանագիտությունը եւ հասկացրեց, որ թագուհու այցի [illegible] բացում կբացակայի Մոսկվայից:

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

Մշակույթ

Որտե՞ղ է տաճարը...

Մի հիշ լավատեսություն, մի հիշ կասկածամտություն ու մի հիշ վստահություն՝ Մայր տաճարը Երևանում չի կառուցվի

«Հիշում եմ, Նկարչի տունը բացված Մայր տաճարի նախագծերի ցուցադրանքն սկսվեց ... ջրհեղեղով առաստաղից, դահլիճից աստիճանները բռնվում էր ջեռուցման ջուրը: Սա կարծես հեսագա ջրածգումների նախանշանն էր...», ի՞նչ արած, ջրհեղեղ տեսած ու ջրհեղեղի սովոր ժողովուրդ ենք, եւ ակնհայտ է, որ այս տաճարի կառուցումը եւս դեռ շատ ջուր ոլորեներ եւ երկու բարձրաստիճան հոգեւորական ես եւ Ներսես արքեպիսկոպոս Պողարյանը: Հոգեւորականներիս հիմնական դարտականությունն այն էր, որ տեսնելիք, թե որքանով է նախագիծը համադասարխանում ծիրա-դավանական կիրառական եւ ավանդական դահլիճներին: Ստեփան Քյուրչյանի վերամբակած լուծումներն ավելի ճիշտ էին, տրամաբանական ու հարմար: Ճարտարապետական առումով եւս այն ինքնության դիմաց. բաս մասնագետների. նրանում հանդարտում էին ազգայինն ու ժամանակակիցը: Հանձնաժողովը միակարծիք հավանության արժանացրեց Ստեփան Քյուրչյանի նախագիծը: Հայոց Հայրապետ Վազգեն Առաջին կաթողիկոսը նախագծի չորրորդ օրինակի վրա գրավոր հավանություն տվեց, որից հետո ոչինչ հնարավոր դառնար նախագծային աշխատանքների հարցում փույթ ֆինանսավորումը: Վեհափառ հայրապետի ՝հիվանդության օրոմ ստեղծված տնտեսա-ֆինանսական հանձնաժողովը, որի գլխավորը եւ էի նշանակված, Վեհափառից ստացավ մի կարգադրություն Ժենեի բանկից որոշակի գումարներ հարկնիք տեղափոխելու մասին, որպեսզի հոգացվեն Մայր տաճարի, Մոլիսակի եւ Տարոնի եկեղեցիների կառուցման ծախսերը: Գումարներն այժմ Մայր աթոռ ս. Էջմիածնում են: Սակայն դեռ այդ ժամանակներում, ինչպես գիտեք, տիար Ալեք Մանուկյանը որոշեց հոգալ Երեւանում կառուցվելիք Մայր տաճարի կառուցման բոլոր ծախսերը, եւ իր հերթին ծանրաբանալով նախագծին, հայտնեց, որ որոշ վերապահումներ ու առաջարկներ ունի աշխատանքի վերաբերյալ: Դա մի գրություն էր ուղարկել Վեհափառին, որ իր ներկայացուցիչներ գալու են հարկնիք ճարտարապետական մասնի հետ տեղում քննարկելու դիտողությունները:

Վեհափառ Հայրապետի վախճանումից հետո տաճարի խնդիրը մի ինչ անորոշ վիճակում մնաց: Դաբաղի-կոտական տեղապահն այս կարճ ժամանակահատվածում չի կարող նման խնդիրների մեջ խորասուզվել: Այնուհանդերձ, առաստաղ ենք տիար Ալեք Մանուկյանի ներկայացուցիչներին: Անշուշտ, ժամանակը շատ սուղ է, եւ այս շինարարության յուրահանչյուր ծգձգում վնասում է նոր տաճարը՝ 1700-ամյա հոբելյանին կառույցի ավարտը: Կարծում եմ ոչ շատ, բայց բավական ժամանակ ունենք:

Եկեղեցին լավատես է, հարցած նախագծի հեղինակը սկեղծիկ (մեր հանդիպմանը նա կասկած հայտնեց, թե՝ տաճարն արդեն հնարավոր կլինի ժամանակին կառուցել), իսկ ոմանք ողբակի վատատես են: Մի էքստրասենս ֆենոմենի մասին հրատարակում դատարանում բանակցությունների համար խմբագրությունում գտնվող «բանագնացը» սեղանին տեսնելով տաճարի նախագծերի լուսանկարները, ասաց. «Առանցից ոչ մեկն էլ չի կառուցվելու, վերեից արդեն հրդեհել են, մարդիկ շատ են անհավատ ու մեղսալից...»:



Արտակ Գյուլյան. Մայր տաճարի մակետ

Ինքս կաշխատեմ չեզոք մնալ: Ամենին, ընդառաջելով նամակագրին, որի նամակի բուն նոթասակը, բերեւ, ճարտարապետ Արտակ Գյուլյանի ներկայացման արժանի նախագծի մասին խոսելն է, ողբակի մեջբերում կանեմ նրա տողերից (Ստեփան Քյուրչյանի նախագծի մասին մամուռնան խոսելիս է իմ վերոհիշյալ հոդվածում) «Տաճարն անբարոյ դիմերումման արդյունք է, ստեղծված հայ կառուցողական մտքի նվաճումներով: Արտակ Գյուլյանը հիմք է ընդունել հավասարաբեւ քառախորան տիպը, որը վերջանում է խոշորագմբեթ հորինվածքով: (Մեր գրքերն բոլոր դասական կառույցներն այս տիպին են պատկանում): Քարի ճարտարապետությանը հարազատ քառախորանային այս խոշոր, բայց այդպես էլ նոր հաստակազծային տիպն իր մեջ ներառում է նախորդների կոնստրուկտիվ եւ գեղարվեստական դրսեւորումները:

Այսօրվա շինարարական տեխնիկան կարող է լուծել կոնստրուկտիվ այսօրինակ հակա լուծումներ գրված մեր բոլորի մեջ 1700 տարի խորհրդանշան դարձած ավանդական ձեւերը: Մայր տաճարն ավանդաբաշ եւ դասմասեր ժողովրդի համար լինելու է ճիվիրական սրբատեղի, այս դեպքում էլ տաճարի տեսքը դառնալու է խորհրդանիշ մեկ, թե հազար անգամ տեսնողների, նաեւ չտեսնողների համար, որովհետեւ այդ դատերն անցնելու է հոգիների միջով, դասմվելու է, գովելու եւ նկարվելու: Ավանդականն ունենալու հրամայականը բաներ շեշտերով է լցված հայ մարդու մեջ. ո՞ր է Վարագավանքը...»:

ՈՒՐԻՇ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Ակնքարքը» հիշեցնում է բոլորին, իսկ ծառե՞րը

Երեկ Երեւանի կենտրոնական փողոցներից մեկում Պարոնյանի անվան թատրոնի դիմաց, բացվեց «Ակնքարք» ամսագրի ծնունդն ազդարարող եւ նրա տպագրության գործը հանգանակող ցուցահանդեսը: Ամսագրի նոթասակն է փառատոնի լուսանկարների միջոցով համաբխարհային հանրությանը լուսաբանել այն ամենը, ինչ վերաբերում է հայկական լեռնաբխարհին, հայ ժողովրդին սկսած 1988-ի փետրվարից: Այն լույս է տեսնելու ամիսը մեկ անգամ՝ հայերեն: Լուսանկարները կմեկնաբանվեն հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, լեհերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, հունարեն, արաբերեն, դարսկերեն, չինարեն (այսպես խոսանում է հայտարարագիրը):

Ամսագիրը կունենա մի քանի բաժին դարաբաղյան շարժում, դատերազմ, 88-ից հետո զոհվածներ, երկրի դասմությունը, ազգային փոքրամասնություններ Հայաստանում, բնակիչների կենցաղն ու մշակույթը, Հայաստանին աջակցող բարեգործներ, տաղանդավոր հայ մանուկներ:

Չնայած ցուցադրված մի քանի հարյուր ռեդորտաժային լուսանկարների հեղինակն Արսեն Պողոսյանն է, բայց ամսագրում կզետեղվեն ամենատարբեր լուսանկարիչների աշխատանքներ: Արսեն Պողոսյանի հանդարտ սա առաջին ցուցահանդեսը չէ փողոցում բացված: 88-ի հունիսի 15-ին հանրապետության Գերագույն խորհրդի դիմաց բացված առաջինն էր այդ ցուցահանդեսներ են հաջորդել:

Ամսագրի տնօրեն Ավիկ Գեւորյանը, որին 88-ին «Զվարթնոց» օդակայանում տեղի ունեցած դեղերի կարակցությամբ դատարարել են, ելել է ՀՀՀ զինվորական ջոկատի (89-ից), առա ՀԱԲ-ի անդամ, ասաց, որ ամսագիրը խուսափելու է կուսակցականությունից եւ կուսակցական մեկնաբանություններից: Նա հայտնեց նաեւ, որ ամսագրի հատորից բաժին է հանվելու զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Հետաքրքիր սկիզբ է սա, ոչ թե գեղարվեստական լուսանկարային ամսագիր, ինչպես ընդունված է աշխարհում, այլ ակնքարքի լուսանկարային մատադահում խորնիկա: Միայն չգիտեմ է մոռանալ, որ այն հատաբուն ծառերը, որոնց վրա խփված «բեռնի» մեխերից կախված ցուցանակներն ճոճվում են անձրեւի տակ, իրենց մեջ եւս դատում են խորնիկա...

Ռ.Հ.

ՓԱՌԱՏՈՆ

Թավշյա հեղափոխություն հայ կինոյում

ԵՐԵՎԱՆ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Հանրապետական կինոյի տանը շարունակվում է շվեյցարահայկական «Առագաստ» երիտասարդական ակումբների կազմակերպած երիտասարդ կինոգործիչների առաջին ոչ պետական «Առաջին ֆիլմ» կինոփառատոնը: Հոկտեմբերի 19-ին ներկայացվեցին «6-9» ուսանողական ստուդիայում նկարահանված՝ Հովիկ Գալստյանի «Ես համարձակվում եմ մտաբերել», «Հայֆ» կինոստուդիայում նկարահանված Արքուր Դեր Թումասյանի «Հոյում», Վահե Կեւորկովի «Թնդանոթները ծաղիկների մեջ», «Սերոնֆ» կինոստուդիայում նկարահանված՝ Նահիտ Շիրինյանի «Թիթեռների ժամանակ», Արամ Եղիազարյանի «Ամառնամուտ» («Հայֆ»), ինչպես նաեւ ԱՄՆ-ում նկարահանված Զարեհ Եգնավորյանի «Թագադրված եւ բագավորող» ֆիլմերը: «Ես գտնում եմ, որ հայկական կինոն վեց տարով հետ ընկավ քաղաքականությունից: 1988 թվականին ստեղծվեց մի իրավիճակ, որի ժամանակ հին կինոգործիչները չէին կարողանում ստեղծագործել, իսկ նոր սերունդը պատրաստ չէր: Այս կինոփառատոնը, ես գտնում եմ, որ հայ կինոյում բավշյա հեղափոխության սկիզբն է», նշեց երիտասարդ կինոգործիչ Հովիկ Գալստյանը:

Ավագագույն հայագետ հոգեւորականը շարունակում է աշխատել

Լրացավ նշանավոր բանասեր, երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբան Նորայր արք. Ծովականի (Պողարյան) ծննդյան 90 ամյակը: Հայագիտության երախտավորը հեղինակ է բազմաթիվ ուսումնասիրությունների, այդ թվում՝ ս. Հակոբյանց վանքի ձեռագրերի տասն մեկ հատորանոց «Մայր ցուցակի», որ հրատարակվել է 1966-1991 թթ.: Գիտնականի հոբելյանի նախօրեին լույս տեսավ նրա բանասիրական հոդվածների «Վանատոր» ժողովածուն, որի նյութերից շատերը ժամանակին տպագրվել են պարբերական մամուլում եւ այսօր, ինչպես ինքն է գրում՝ «դիտավաչելի չէին հայ բանասերներուն»: Այստեղ ընդգրկվում են 6-ժ դարերի մատենագրության մեծ ու փոքր երեւույթների ու դեմքերի հետ կապված ամենաբազմազան խնդիրներ:

Ե դարի մշակութային կյանքը ներկայացնող հոդվածները շոշափում են բարգմանական գրականությունը, տարբեր պատմիչների երկերի մեջ հանդիպող ընդհանուր տեղիները, սրբագրություններ եր նրանց երկերում, ժամանակագրական ճշգրտումներ: Հույժ կարեւոր հարցեր է արծարծում «Կորիւնի ժամանակագրական վերջաբանը» հոդվածը, երբ է կրոնավորել սուրբ Մեսրոպը, եւ երբ է հիմնադրվել հայ դպրությունը: Հիմնավորելով իր այն դրույթը, թե Հազկերտի որդի Վռամի թագավորության տարիները դուրս են մնացել Կորյունի բնագրից, դրա հետեւանքով մատենագրի խոսքի մեջ գոյացել է հակասություն, Ն. Ծովականը առաջարկում է «Վարք Մեսրոպի»-ի մեջ կատարել ճշգրտում. «...եւ Յազկերտի ամս քսան եւ մի, եւ Վռամայ ամս քսան եւ մի, եւ...» կորյունի խոսքի մեջ առաջացած անհամաձայնությունը հաղթահարելու համար բանասերը դրանք համադրում է սուրբ գրքի հայերեն թարգմանությունների հետ, թե հայ գրերի գյուտի ճշգրիտ թվականը 404 թ. է:

Ը դարի հայ գրականության կարեւոր դեմքերից է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսը, որի ժառանգության մասին մեր պատկերացումը ցավալիորեն աղքատ է: Ն. Ծովականն, ահա, հրատարակել է «Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի առ սուրբն Յիզիթուզիս, յորժամ ի բանդի էր ի Դվինի» գրությունը, մյուս կողմից նկատելով, որ Հանգստեան եւ Մարտիրոսաց շարականները բյուրիմաստաբար են վերագրել Պետրոս Գետադարձին, դրանց հեղինակը Սյունյաց եպիսկոպոսը պիտի լինի:

Ն. Ծովականը 1951-ին գտավ եւ հրատարակեց Ը դարի բանաստեղծուհի Սահակդուխտ Սյունեցու՝ մեզ հայտնի միակ գործը՝ Ծննդեան կոչերգը: Այժմ Երուսաղեմի թթ. 2431 եւ 1741 ձեռագրերից քաղելով նա շարանաբության մեջ է դնում «Կոչուրդ փոխման Աստուածածնի» նորահայտ բնագիրը:

Գրքում կարեւոր ճշտումներ կան շարականների հեղինակների հարցի կապակցությամբ: Ընթերցողը բանասիրական ու պատմագիտական արժեքավոր դիտարկումներ կգտնի Մովսես Խորենացուն, Ղազար Փարպեցուն, Հովհան Մայրավանեցուն, Ստեփանոս Սյունեցուն, Թովմա Արծրունուն, Գրիգոր Վկայասերին, Գրիգոր Մարաբեցուն, Գեորգ Սկեւռացուն եւ շատ ուրիշների նվիրված հոդվածներում, ուր հատուկ ուշադրության առարկա է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի ձեռագրերի բերած նյութերը հայ մատենագրությանը, պատմագիտությանը, ծեռագրագիտությանը: Իսկ այդ ձեռագրերի ամենաարդյունաբեր հեղինակը Նորայր արք. Ծովականն է: Իր փոքրածավալ, լակոնիկ ոճով հյուսված հոդվածների «Վանատոր» ժողովածուն մի տեսակ հանրագումարի է բերում նրա տարիների վաստակը բնագրագիտության ասպարեզում: Սակայն ուրախալի է, որ ծերունազարդ հեղինակն այսօր եւս շարունակում է իր օգտաշատ աշխատանքը՝ փառք հայագիտության:

ԱՐՇԱՎԻՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Երեւան

ԱՆՑՈՒՂԱՐՁ

Հայկական գորգեր Ստոկհոլմի ցուցասրահում

Հարկավոր էր հայաստանցի մի մասնագետի ուղեւորություն Ստոկհոլմ, որպեսզի տեղի գորգագիտավարժ Պետեր Վիլբուրգն իմանար, որ իր ցուցասրահում ներկայացված կովկասյան կամ փորձասիական անվանվող 130 գորգերից 58-ը հայկական են: Նրա համար այդ «հայտնությունն» արեց բանասեղծ, երգահան երգիչ Վահրամ Թաքիկյանը, որը կնոջ՝ բարգմանչուհի Մարիա Թաքիկյանի եւ գրչակից ընկեր Յուրի Սահակյանի հետ այդ երկրում էր գտնվում տեղի գորգերի միավորման հարվերով: Ըստ որում, տանտերը հենվեց ոչ թե հյուրի վստահեցնող խոսքերի վրա, այլ նրա նից ստացավ հայկական գորգերի վերաբերյալ բազում տեղեկություններ եւ նա խնդրեց դրանց հրատարակումը էվերդերեն: Այդ անակնկալ հանդիպումից մի այնպիսի մտերմություն ստեղծվեց, որ գորգերի վերաբերյալ մեր միմյանց լրացնող տեղեկատվությունը շարունակվելու է, «Արմենպրեսի» թղթակցին ասաց Վահրամ Թաքիկյանը: Պարոն Վիլբուրգից ստացա իր ցուցասրահի տասնամյակին նվիրված շեղ դատերազարի ընծայագրած մի օրինակ, ինչպես նաեւ գորգերին նվիրված այլ գրականություն: Ես այդ երկրում որոնում էի ուրիշ գորգագիտավարժների ու մասնագետների, որոնք ուսումնասիրություններ ունեն կովկասյան գորգարվեստի մասին եւ որոնց գիտեի մինչեւ գնալս: Սակայն այնտեղ իմացա, որ նրանք արդեն մեկնել են Ամերիկա, ու այդ որոնումներից մեկի ժամանակ էլ ծանոթացի իմ նոր ծանոթի հետ: Վիլբուրգի հավաքածուում մասնավորապես ճշտվեց «Գոհար» տիպի մի գեղեցիկ գորգի գորգի դատկանելիությունը, որը գործել են Կովկասից Անատոլիա գաղթած հայերը, ինչպես նաեւ Սեո մի գորգ, որն, ամենայն հավանականությամբ, գաղթի հետեւանքով Ամերիկայում հայտնված մեծեցիների ժառանգների ձեռքի աշխատանքն է: Հավաքածուն 300-100 տարեկան է եւ մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ինչպես գիտական տեսակետից, այնպես էլ հավաքորդային սեփականության առումով:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արմենպրես

digitised by A.R.A.R.@

ՇԱԽՄԱՏ

Հայաստանի չեմպիոնը նաեւ Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարի հաղթող

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Երեւանցի գրոսմայստեր Աշոտ Անանասյանը, որը վերջերս վստահորեն 7-րդ անգամ նվաճեց Հայաստանի չեմպիոնի կոչումը, գերազանց մարզավիճակում գտնվում է: Նա փայլուն հանդես եկավ նաեւ ուժեղ կազմ ունեցող Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարում: Ստացվել էր այնպես, որ 1-ին տեղի հարցը պետք է որոշվեր հենց վերջին տուրում Անանասյան-Հակոբյան մրցավեճում: Անանասյանը վաստակել էր 6.5, իսկ Հակոբյանը 6 միավոր: Բնականաբար 1-ին տեղ գրավելու համար աշխարհի պատանիների եռակի չեմպիոնը ձգտում էր հաղթանակի: Սակայն Անանասյանը վճռական դահիճ էլ հուսալի խաղ ցուցադրեց եւ դարտիան ավարտելով ոչ-ոքի 9 հնարավորից վաստակեց 7 միավոր ու գրավեց 1-ին տեղը: 2-րդ տեղը բաժին հասավ Վլադիմիր Հակոբյանին, որն Անանասյանից հետ մնաց ընդամենը կես միավորով: Հակոբյանը մրցաշարի միակ մասնակիցն էր, որ դարտիայում չկրեց: 3-5-րդ տեղերը բաժանեցին գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյանը, Ամբաս Լդուսյանը եւ Հայաստանի օլիմպիական հավաքականի նորեկ Արսեն Եղիազարյանը:

Տ. Պետրոսյանի հուշամրցաշարի հաղթող Աշոտ Անանասյան

Ինչպես նկատելի է, առաջին հնգյակը Հայաստանի հավաքականի անդամներն են, որոնք նոյեմբերի 2-ից կեսին Մոսկվայում մասնակցելու են շախմատի աշխարհի օլիմպիադային: Դա վկայում է, որ մեր հավաքականը իրոք զորեղ բիմ է, եւ սպասելի է, որ կարեւոր մենակարկից առաջ բոլորն էլ գտնվում են գերազանց մարզավիճակում: Հավանաբար մեր հավաքականի 6-րդ անդամը կլինի գրոսմայստեր Արտաշես Մինասյանը, որը չէր մասնակցում այս մրցաշարին:

Ուրախացնում է երիտասարդ Արսեն Եղիազարյանի հաջող ելույթը: Այդ երիտասարդ շախմատիստը հուսալի խաղ է ցուցադրում եւ 2-րդ տեղը Հայաստանի առաջնությունում ամենեւին պատահականություն չէր: Մեր ընտրանին ի դեմս նրան լավ հեռանկար է ստացել:

6-րդ տուր

Անանասյան-Վահանյան	1/2-1/2
Եղիազարյան-Սուեթին	1-0
Տայմանով-Վասյուկով	1/2-1/2
Հակոբյան-Պետրոսյան	1-0
Լդուսյան-Մնացականյան	1-0

7-րդ տուր

Պետրոսյան-Անանասյան	0-1
Վահանյան-Եղիազարյան	1-0
Սուեթին-Տայմանով	1/2-1/2
Վասյուկով-Լդուսյան	0-1
Մնացականյան-Հակոբյան	1/2-1/2

8-րդ տուր

Անանասյան-Մնացական.	1-0
Եղիազարյան-Պետրոսյան	1-0
Տայմանով-Վահանյան	0-1
Վասյուկով-Սուեթին	1-0
Լդուսյան-Հակոբյան	1/2-1/2

9-րդ տուր

Հակոբյան-Անանասյան	1/2-1/2
Մնացականյան-Եղիազար.	0-1
Պետրոսյան-Տայմանով	1-0
Սուեթին-Լդուսյան	0-1
Վահանյան-Վասյուկով	1/2-1/2

Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարի ամփոփիչ աղյուսակը

1. Աշոտ Անանասյան	7
2. Վլադիմիր Հակոբյան	6.5
3-5. Ռաֆայել Վահանյան	6
3-5. Ամբաս Լդուսյան	6
3-5. Արսեն Եղիազարյան	6
6-7. Արշակ Պետրոսյան	4
6-7. Եւգենի Վասյուկով	4
8. Մարկ Տայմանով	3
9. Ալեխեյ Սուեթին	1.5
10. Էդուարդ Մնացականյան	1

ԵՐԵՎԱՆ

Նավասարդյան խաղերը դարձնել միջազգային

«Հրազդան» կենտրոնական մարզադաշտ հյուրընկալել է մայրաքաղաքի նավասարդյան խաղերի մարզահանդեսի հաղթողներ մարզահանդեսի գլխավոր մասնակիցներին: Առաջին անգամ է համամարդային նման տոնահանդես կազմակերպվում, հաշվի առնելով հայկական ավանդական նավասարդյան խաղերի վերածնունդը մեր օրերում:

Բացման հանդիսությանը մասնակցում էին մայրաքաղաքի բոլոր շրջանների հանրակրթական ու մարզադպրոցների սաներ, շրջանային խաղերում հաղթանակ տարած դպրոցների մարզիկներ: Մարզադաշտի կանաչ հարթակում մարզահանդեսի մասնակիցներին ողջունում է հայ առաջին օլիմպիական Վարազդատ բազավոր, իր օրհնությունը հաղորդելով ժողովրդի ֆաշազում գավակներին: Այստեղ էր եւ հայկական առասպելի հերոս Հայկը, իր լայնալիճ աղեղով, որով խոցել էր բենամուն, ազատություն բերելով հայոց հողին: Մինչեւ մարզահանդեսի հանդիսավոր բացման արարողությունն սկսելը, մարզադաշտի կենտրոնում ելույթ ունեցան երգի-դարի իսկերը, կատարելով ազգային դարեր ու երգեր:

Շերքի հրամանատարի Երեւան խաղերի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, համամարդային նավասարդյան խաղերի մարզական հանձնաժողովի նախագահ Յուրի Բախչանին տրված զեկույցից հետո, խաղերի սկիզբն ազդարարող Հայաստանի Հանրապետության ոստիկան դրոշի բարձրացման դաշտի վրա տվում է հունա հռոմեական ըմբշամարտի աշխարհի եւ Եւրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանին, ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի առաջնության արծաթե մեդալակիր Արայիկ Բաղդասարյանին, ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության երկրորդ մրցանակակիր Արմեն Սիմոնյանին եւ նույն մարզաձեւում աշխարհի առաջնության մրցանակակիր Գեորգ Հովհաննիսյանին: Այնուհետեւ մարզադաշտի տարբեր հատվածներում դայլար է ծավալվում ազգային խաղերում առաջնություն նվաճելու համար: Կռռամարտը դարձրացում, դարանի ձգում, բերդի գրավում, հեծյալների մենամարտում առավել հաջող են ելույթ ունենում Էրեբունու երգանի դասանիները: Նետաձգության, սուսերամարտի, աղեղային մարմնամարզության ու ոմբերն են չափում մայրաքաղաքի բոլոր անվանի մարզիկները:

«Նավասարդյան խաղերը, ասում է դաշնական գիտությունների դոկտոր, խաղերի կազմկոմիտեի անդամ Կարեն Աբրոյանը, դարձ ի վեր մեր ժողովրդի համար ծառայել են որպես ոգեշնչող զենք ազգային ինքնատարբերության ստուգաքար: Հայրենիքի դաշտաղաղությունը, բնական է, ուժեղ, անվախ գինվորի ձեռքերում է: Եւ այս խաղերի վերածնունդով մենք հնարավորություն ենք ունենում դաստիարակել Հայրենիքի սիրով տոգորված այնպիսի մի նոր սերունդ, որը մշտապես դաստրաս լինի իր Հայրենիքի, իր հողի ու ջրի դահիճության գործին: Մեր նորատակն է այս խաղերը դարձնել ավանդական եւ նույնիսկ նրան տալ միջազգային բնույթ»:

ԲԿՄԱ-ն Երեւանի գավաթակիր

Նույն օրը «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում խաղերի մասնակիցներն հնարավորություն ունեցան ականատեսը լինել ֆուտբոլի երեւան խաղաքի գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպմանը: Այդ գավաթին տիրանալու համար դայքարող տասը թիմերից եզրափակիչ էին դուրս եկել ԲԿՄԱ-«Դինամո» թիմերը: 1:0 հաշվով հաղթանակ տարան բանակային ֆուտբոլիստները:

ԳԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

«Մանչեսթըր Յունայթեդը» կրկնապատկել է շահերը

ԳՐԻԳՈՐ ԱՍԻՐՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Վերջին տարիներին «Մանչեսթըր Յունայթեդը» Լոնդոնի «Արսենալի» հետ դարձել է Անգլիայի առաջնությանը մասնակցող ամենաառույց ֆինանսներն ունեցող թիմը: Ընդհանրապես ֆուտբոլում շահ ունեցող թիմերը շատ քիչ են: «Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարները հայտնել են, որ 19931994 թթ. մրցաշրջանի հաշիվները վկայում են, որ թիմը 10 միլիոն 780 հազար ֆունտ ստեռլինգի շահ է ունեցել (14 միլիոն դոլար): 1992-1993 թթ. մրցաշրջանում շահը կազմում էր 4.2 միլիոն ֆունտ ստեռլինգ:

«Մանչեսթրի» մեծ շահերն ապահովել են երկրի չեմպիոն ու գավաթակիր դառնալը եւ նրա ֆրանսիացի աստղ Էրիկ Կանտոնայի Անգլիայի լավագույն ֆուտբոլիստ ճանաչվելը, որը շատ մարզասերների բերեց մարզադաշտ: Ակումբը մեծ գումարներ շահեց նաեւ թիմի հուշանվերների (նկարներ, դրոշակներ...) վաճառքից: «Մանչեսթր Յունայթեդի» ընդհանուր եկամուտները 19931994 թթ. մրցաշրջանում կազմել են 43.8 միլիոն ֆունտ ստեռլինգ, որոնք 74 տոկոսով գերազանցում են նախորդ տարվա արդյունքները:

«Մանչեսթր Յունայթեդի» գլխավոր մարզիչ Ալեկս Ֆերգյուսոնը դարձավ Անգլիայի առաջնության լավագույն մարզիչ: Թիմը նոր մրցաշրջանում ուզում է կրկնել իր հաջողությունները, բայց հիմա Անգլիայի առաջնությունում ընթանում է 4-րդ տեղում, զիջելով «Նյուկասլին», «Բլեկբյոռնին» եւ «Նոթինգհեմ Ֆորեսթին»:

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսական թիմերը ՈՒԵՖԱ-ի մրցաշարում

Եւրոպական ակումբային մրցաշարերից ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության 1/16-րդ եզրափակիչ են հասել ռուսական 2 թիմեր՝ Մոսկվայի «Դինամոն» եւ Կամիշինի «Տեխսիլշիկը»: Երկուսին էլ հերթական փուլում ուժեղ մրցակիցներ են բաժին ընկել: «Դինամոն» Մոսկվայում ուժերը չափեց Մադրիդի «Ռեալի» հետ: Համառ դայքարից հետո արձանագրվեց ոչ-ոքի՝ 2-2: Պատասխան խաղում «Դինամոյին» լուրջ փորձություն է սպասում: «Տեխսիլշիկը» հանդես եկավ Ֆրանսիայում, որտեղ ուժերը չափեց այդ երկրի առաջնության առաջատար «Նանտ» թիմի հետ: 2-0 հաշվով հաղթեցին դատի տերերը: Պատասխան հանդիպումները տեղի են ունենալու երկու շաբաթ հետո:

Առաջատարը Սալովն է

Բուենոս Այրեսում մեկնարկած անվանի գրոսմայստեր Լեւ Պոլուգաեւսկու 60 ամյակին նվիրված միջազգային խոշոր մրցաշարում 5 տուրից հետո առաջատարն է պետերբուրգցի գրոսմայստեր Վալերի Սալովը, որը հիմա արդում է Իսպանիայում: Սալովը վաստակել է 3,5 միավոր: 2-3-րդ տեղերը բաժանում են ֆիդեի վարկածով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը եւ հունգարացի ճաղանդավոր շախմատիստուհի Հուդիթ Պոլգարը: Երանք իրենց ակտիվում ունեն 3-ական միավոր:

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Շտեֆի Գրաֆը հոգնել է

750 հազար դոլար մրցանակային հիմնադրամով Մոնրեալում տեղի ունեցած թենիսի միջազգային մրցաշարից հետո գերմանացի հանրահայտ թենիսիստուհի Շտեֆի Գրաֆը հայտարարեց, որ վերջերս ավելի շատ հուզվել է իր դարտություններով, քան թե հաղթանակներով: Նա չի մոռացել ընթացիկ մրցաշրջանում իր երկու դարտությունները՝ մեկը «Ռոլան Գարոսում» (Ֆրանսիայի բաց առաջնությունում), Մարի Պիերսից, քյուսը «Ուիմբլդոնի» մրցաշարի առաջին խաղ տուրում Լորի Մակ Նեյլից: Շտեֆի Գրաֆը հայտարարեց, որ հոգնել եւ թենիսից մի փոքր զզվել է ու մտքից չի հեռանում դրոֆեսիոնալ թենիսին հրաժեշտ տալու ցանկությունը. «25 տարեկան եմ եւ 12 տարի մասնակցում եմ դրոֆեսիոնալ թենիսի մրցաշարերին: Այս տարի մինչեւ ամրիլ ամիսը ոչ մի դարտություն չկրեցի: Դրանից հետո երկու անգամ զի

մրցաշրջանում իր երկու դարտությունները՝ մեկը «Ռոլան Գարոսում» (Ֆրանսիայի բաց առաջնությունում), Մարի Պիերսից, քյուսը «Ուիմբլդոնի» մրցաշարի առաջին խաղ տուրում Լորի Մակ Նեյլից: Շտեֆի Գրաֆը հայտարարեց, որ հոգնել եւ թենիսից մի փոքր զզվել է ու մտքից չի հեռանում դրոֆեսիոնալ թենիսին հրաժեշտ տալու ցանկությունը. «25 տարեկան եմ եւ 12 տարի մասնակցում եմ դրոֆեսիոնալ թենիսի մրցաշարերին: Այս տարի մինչեւ ամրիլ ամիսը ոչ մի դարտություն չկրեցի: Դրանից հետո երկու անգամ զի

Ի՞նչ խաղեր, ուզում է ամուսնանալ, ընտանիք կազմել, մայր դառնալ բողնելով մեծ թենիսը ու էլի գաղտնիքներ: Բայց ճշմարտություն է, որ Մոնիկա Սելեշի 2 տարվա բացակայությունից հետո Շտեֆի Գրաֆի անդադար հաղթանակները կարող են զզվելի դառնալ: Իսկ եթե որեւէ սդորտաձեւում, լինի դա դրոֆեսիոնալ ամենաբարձր, թե ամենացածր մակարդակի, որեւէ հաղթանակ այլեւս չի հուզում չի ուրախացնում մարզիկին, դա նշանակում է, որ այդ մարզիկը շուտով հրաժեշտ է տալու իր մարզաձեւին:

Գ. Ա.

digitised by A.R.A.R.@

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների լրատվական ծառայությունը եւ ՀՀ լուսավորության նախարարությունը հայտարարում են «Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման ծրագրի համար աշակերտների գրանցման եւ ընտրության սկիզբը: «Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման («Բրեդլի») ծրագիրը միջնակարգ դպրոցների այն աշակերտների համար է, ովքեր փիրաղեսում են անգլերեն լեզվին, լավ առաջադիմություն ունեն դպրոցում եւ օժտված են հաջողակ փոխանակման աշակերտ լինելու բոլոր անհրաժեշտ հատկություններով: Երրորդ տարին է արդեն, որ այս ծրագրի համար ընտրված աշակերտները կաղրեն ամերիկյան իյուրընկալ ընտանիքներում եւ մոտ մի տարի (1995 թվի օգոստոսից 1996-ի հունիսը) կհաճախեն ամերիկյան դպրոցներ:

«Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող աշակերտները պետք է

■ տվյալ ժամանակ լինեն Հայաստանում միջնակարգ դպրոցի 8-րդ, 9-րդ կամ 10-րդ դասարանի աշակերտներ,

■ ծնված լինեն 1978 թվի հունիսի 1-ից 1980 թվի սեպտեմբերի 1-ը ժամանակահատվածում,

■ վերջին երկու տարվա ընթացքում ցույց տված լինեն բարձր առաջադիմություն: (Այն աշակերտները, ում ընտանիքի անդամներից գոնե մեկը վերջերս դիմել է ԱՄՆ-ի վիզայի, եւ նրանք, ովքեր վերջին 5 տարվա ընթացքում երբեք ամսից ավելի եղել են ԱՄՆ-ում, չեն կարող դիմել ծրագրին):

Աշակերտները, ովքեր ուզում են դիմել ծրագրին, կարող են գրանցվել հետեւյալ 4 վայրերից մեկում, նշված օրը

Գյումրի հոկտեմբերի 17-ին, ժամը 10:00,
Գեղամ Սարյանի անվան թիվ 24 դպրոցում:
Վանաձոր հոկտեմբերի 19-ին, ժամը 10:00,
Վանաձորի թիվ 1 հանրակրթական վարժարանում:
Սիսիան հոկտեմբերի 25-ին, ժամը 13:00,
Սիսիանի հանրակրթական կոլեջում:
Երեւան հոկտեմբերի 29-ին եւ 30-ին, ժամը 8:30,
Երեւանի Ամերիկյան համալսարանում:

Գրանցման ժամանակ պետք է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը

■ ծննդյան վկայական կամ անձնագիր մեկ պատճենով:

■ դպրոցի վերջին երկու տարվա գնահատականները դպրոցի կնիքով եւ տնօրենի ստորագրությամբ (մեկ պատճենով):

■ երկու անձնագրի լուսանկարի չափի լուսանկար:

Գրանցման ավարտից հետո աշակերտները կտեղեկացվեն անգլերեն լեզվի քննության տեղի ու ժամանակի մասին: Անգլերենի քննությունն ու շարադրությունը անցած աշակերտները կլրացնեն ծավալուն մի դիմում: Հետո նրանց հետ կանցկացվի դպրոցական հարցազրույց: Կիսաեզրափակիչ փուլի հաղթողները կընտրվեն այս արդյունքների հիման վրա:

Վերջին ընտրությունը կանցկացվի ԱՄՆ-ում: Ուորդ Լեռնինգը աշխարհի ամենախոշոր ու ամենահին փոխանակությամբ զբաղվող կազմակերպություններից մեկը, Միացյալ Նահանգների լրատվական ծառայության հետ համատեղ կավարտի ընտրությունը: Կիսաեզրափակիչ փուլը հաղթողների թղթերը կվերանայի մասնագիտացած ուսուցիչների մի խումբ ԱՄՆ-ում: Հաղթողները կհայտարարվեն 1995 թ. մայիսի 1-ից հետո:

«ԵՎԱ»

ուսումնական կենտրոնը հրավիրում է Ձեզ

Սովորելու 1-3-ամսյա դասընթացներում հետեւյալ մասնագիտությունների գծով.

- **օպերատորական գործ, ծրագրային փաթեթների եւ ծրագրավորման լեզուների ուսուցում IBM PC համակարգիչների վրա**
- **անգլերեն լեզու սկսնակների համար Communicative course in English, Learning American English, The Cambridge English course (2 ցիկլով), ամերիկյան ուսումնական հաստատություններ ընդունվողների համար TOEFL**
- **բանկային գործ**
- **հաշվապահություն եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ**
- **կոսմետիկա եւ էսթետիկա**
- **մերսում (մասաժ)**

Դասընթացներն ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկատ) հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով: Մենք երաշխավորում ենք ոչ միայն ուսուցման բարձր մակարդակ, այլեւ հարմարավետ դասասենյակներ հաղորդի կենտրոնում: Ընդունում ենք ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11-ից 16-ը:

Հասցեն՝ Սարյան 4 (Սարյանի տուն-թանգարանի դիմաց)
Հեռախոս 58-21-22

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

A STYLE

ORIGINAL DESIGN

ՕԳՏՎԵՔ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕՐՎԱ ՑԱՆԿԱՑԱԾ ԺԱՄԻ ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Մեր հասցեն՝ Երեւան, Հանրապետության 47,
Հեռախոս՝ 581841

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՄՈՒՆՔՆԵՐ



Նոր կանոնավոր չվերթ դեպի
ԱՄՍՏԵՐԴԱՄ
ամեն շաբաթ օր, սկսած նոյեմբերի 7-ից:

Տեղեկությունների համար դիմեք ՀԷՄՈՒ գրասենյակներ:

53-05-02
53-06-62

ՄԻ՛ ԴԱՐՁԵՔ ՌԵԺԻՄԻ ԳԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵ՛Ք ՀԱՃԱԽ



Կրծոտ հաջողությամբ կերակրելու համար հետեւեք երեխայի պահանջներին, ո՛չ թե ժամացույցին: Թույլ տվեք փոքրիկին սնվել, երբ նա սոված է, եւ՝ օրվա ընթացքում եւ թե գիշերը:
Կերակրե՛ք հաճախ: Հաճախակի կերակրելը կբացացնի կաթի քանակը: Այն կավելանա երեխայի պահանջին համապատասխան:

Հետեւե՛ք ցուցումներին՝ կհասնեք հաջողության

Հիվանդանոցում երեխային միշտ ձեր սենյակում պահեք: Այսպիսով կարող եք հաճախ կերակրել թե՛ ցերեկը եւ թե՛ գիշերը:



Ոչ կաթ, ոչ ջուր, ոչ թեյ, ոչ հյութ: Ոչինչ հարկավոր չէ, բացի մայրական կաթից առաջին 4-ից 6 ամսում:

Կերակրեք միա՛յն ու միայն կրծոտ 4-ից 6 ամիս:

Մայրական կաթ: Սա միակ սննունդն է, որն անհրաժեշտ է երեխային կյանքի առաջին 4-ից 6 ամսում: Այն փոքրիկին կպաշտպանի վարակիչներից:

Մի՛ մտահոգվեք կաթի քանակի ու որակի՞ համար:

Մի՛ մտահոգվեք, որ աղքատիկ սնունդը կվնասի ձեր կաթնարտադրությանը: Նույնիսկ փիչ սնվելով դուք երեխային կապահովեք բավարար սննդարար կաթով:

Կրծոտ կերակրելու նոր ցուցումների գրքույկը ձեռք բերելու համար դիմեք ձեր շրջանի պոլիկլինիկա

«Դարբնական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Աբովյանյան 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեն 1893 Տպաքանակը 5000 Ստորագրված է տպագրության՝ 19. 10. 1994 Գինը 10 դրամ

digitised by A.R.A.R.@